

Մարդու իրավունքների եվրոպական դատարան

## Մեծ պալատ

Գործունեության տարեկան զեկույց 2004

Հունվար, 2005 թ.

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական  
կազմակերպության կողմից

Մեծ պալատի 2004թ. գործունեության տարեկան զեկույցի թարգմանությունը ոչ պաշտոնական է և կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության ռեսուրսներով՝ «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) համապատասխանության ապահովումը Հայաստանում. ՄԻԵԿ-ի վերաբերյալ տեղեկությունների և նյութերի արդյունավետ տարածման ապահովումը Հայաստանում» Ծրագրի շրջանակներում (այսուհետ՝ «Ծրագիր»)։ Իրավական ուղեցույցը Հայաստանում գործող հասարակական կազմակերպություն է, որը կոչված է բարձրացնել Հայաստանի բնակչության և այլ երկրների հայերի իրավունքների նկատմամբ հարգանքն ու մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ օրենքների կիրառման և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացնելու միջոցով։

Իրավական ուղեցույցը, Ծրագրի իրականացման շրջանակներում համագործակցության և կատարած ներդրումների համար, ցանկանում է երախտիքի խոսք ասել սույն հաշվետվության թարգմանիչ, Իրավական ուղեցույցի իրավական հարցերով փորձնակ Լուսինե Հակոբյանին ([Այստեղ տեղադրված են տեղեկություններ Լուսինե Հակոբյանի և Իրավական ուղեցույցի իրավական հարցերով այլ փորձնակների մասին](#))։

Մասնագիտական խմբագիր՝ Նարինե Գասպարյան, «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության նախագահ։

Թարգմանությունը կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից։

© 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն։ Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են։

## Բովանդակություն

I.	Նախաբան.....	4
II.	Դատարանի կազմը.....	5
III.	Ընդդատության զիջմամբ Մեծ պալատ հանձնված գործեր (կոնվենցիայի 30-րդ հոդված և Դատարանի կանոնակարգի 72-րդ կանոն)-----	8
IV.	Մեծ պալատի հինգ հոգանոց Հանձնախմբի որոշմամբ Մեծ պալատ հանձնված գործեր.....	10
V.	Լսումներ.....	14
VI.	Ընդունելիության մասին որոշում.....	21
VII.	Վճիռներ.....	22
VIII.	Խորհրդատվական եզրակացություններ.....	38
IX.	Երրորդ կողմի միջամտություն.....	39
X.	43-րդ հոդվածի համաձայն Մեծ պալատի Հանձնախմբի կողմից քննության առնված գործեր.....	40
XI.	2004 թ. դեկտեմբերի 31-ին Մեծ պալատի կողմից քննվող գործերի ցանկ.....	40

## I. Նախարան

2004 թ. Մեծ պալատում քննության առնվող գործերի թիվը հաստատուն է մնացել: Տարվա սկզբին գործերի թիվը կազմել է 22 (որոնք վերաբերում էին 27 գանգատների) գումարած խորհրդատվական եզրակացություն ստանալու համար ներկայացված մի խնդրանք, իսկ տարվա վերջին գործերի թիվը կազմում էր 21 (որոնք վերաբերում էին 31 գանգատների):

14 նոր գործեր (որոնք վերաբերում էին 21 գանգատների) հանձնվել են Մեծ պալատ, որոնցից 7-ը Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն ընդդատության զիջման պատճառով (տե՛ս III Գլուխը ստորև), իսկ 7-ը՝ Մեծ պալատի հանձնախմբի՝ Կոնվենցիայի 43-րդ հոդվածի համաձայն դիմումը վերստին քննության ընդունելու մասին որոշման հիման վրա (տե՛ս IV Գլուխը ստորև):

Մեծ պալատն անց է կացրել ինը բանավոր դատական լսումներ (տե՛ս V Գլուխը ստորև):

Մեծ պալատն ընդունել է գանգատի ընդունելիության մասին մեկ որոշում (Սենատոր Լայնգ. տե՛ս VI Գլուխը ստորև) և կայացրել 15 վճիռ (16 գանգատների վերաբերյալ)՝ 7-ը ընդդատությունը զիջելու գործերով և 8-ը՝ վերստին լսումներ անցկացնելու գործերով (տե՛ս VII Գլուխը ստորև):

Մեծ պալատն ընդունել է նաև մեկ որոշում՝ ի պատասխան Նախարարների կոմիտեի կողմից խորհրդատվական եզրակացության համար առաջին անգամ ներկայացված խնդրանքի (տե՛ս VIII Գլուխը ստորև):

## II. Դատարանի կազմը (2004 թ. հոկտեմբերի 31-ի դրությամբ)

Լուզիոս Ուայլդհարթեր (Շվեյցարիա), Նախագահ,  
Քրիստոս Ռոզակիս (Հունաստան), Նախագահի տեղակալ,  
Ժան-Պոլ Կոստա (Ֆրանսիա), Նախագահի տեղակալ,  
Գեորգ Ռես (Գերմանիա), Բաժանմունքի նախագահ,  
Նիկոլաս Բրացա (Բրիտանիա), Բաժանմունքի նախագահ,  
Գոկուր Ջորունսոն<sup>1</sup> (Իսլանդիա),  
Ջիովանի Բոնելլո (Մալտա),  
Լուցիոս Քաֆլի<sup>2</sup> (Շվեյցարիա),  
Լուկիս Լուկայդես (Կիպրոս),  
Պրանաս Կուրիս (Լիտվա),  
Իրենեու Կաբրալ Բարետո (Պորտուգալիա),  
Ռիզա Տուրմեն (Թուրքիա),  
Ֆրանսուազ Թուլքենզ (Բելգիա),  
Վիերա Ստրաժնիչկա (Սլովակիա),  
Կորնելիու Բիրսան (Ռումինիա),  
Պետր Լորենզեն (Դանիա),  
Կարել Յունգվիերտ (Չեխիա),  
Վոլոդիմիր Բուտկեվիչ (Ուկրաինա),  
Ջոզեպ Կասադեվալ (Անդորրա),  
Բոստյան Ջուպանչիչ (Սլովենիա),  
Նինա Վալիչ (Խորվաթիա),  
Ջոն Հեդիգան (Իռլանդիա),  
Վիլհելմինա Տոմասսեն (Հոլանդիա),  
Մաթթի Պելոնպաս (Ֆինլանդիա),  
Մարգարիտա Ցացա-Նիկոլավսկա (նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի  
Հանրապետություն),  
Հաննա Սոֆի Գրիվ (Նորվեգիա),  
Անդրաշ Բակա (Հունգարիա),  
Ռեյթ Մարուստե (Էստոնիա),  
Էգիլս Լևից<sup>3</sup> (Լատվիա),  
Կրիստաք Տրայա (Ալբանիա),  
Սնեյանա Բոտուչարովա (Բուլղարիա),  
Մինդիա Ուգրեխելիձե (Վրաստան),  
Անատոլի Կովլեր (Ռուսաստան),  
Վլադիմիրո Ջագրեբելսկի (Իտալիա),  
Անտոնելլա Մուլարոնի (Սան-Մարինո),  
Էլիզաբեթ Շտայներ (Ավստրիա),  
Ստանիսլավ Պավլովսկի (Մոլդովիա),  
Լեչ Գարլիցկի (Լեհաստան),  
Խավիեր Բորեգո Բորեգո (Իսպանիա),  
Էլիզաբեթ Ֆուրա-Սանդստրյոն (Շվեդիա),  
Ալվինա Գյուլունյան (Հայաստան),  
Խանլար Հաջիև (Ադրբեջան),  
Լիլյանա Միժովիչ<sup>4</sup> (Բոսնիա և Հերցեգովինա),  
Դին Սպիլման<sup>5</sup> (Լյուքսեմբուրգ), Դատավորներ,

<sup>1</sup> Մահացել է պաշտոնավարման ժամանակ, 2004 թ. սեպտեմբերին:

<sup>2</sup> Դատավոր՝ ընտրված Լիխտենշտեյնի փոխարեն:

<sup>3</sup> Պաշտոնից հրաժարվել է 2004 թ. ապրիլին:

<sup>4</sup> Ստանձնել է պաշտոնը 2004 թ. մայիսին:

Փոլ Մահոնի (Բրիտանիա), Քարտուղար,  
Էրիկ Ֆրայբերգ (Շվեդիա), Քարտուղարի տեղակալ,  
Վոլֆգանգ Շտրասսեր<sup>6</sup> (Ավստրիա), Քարտուղարի տեղակալ:

### Դատարանի կազմը (2004 թ. նոյեմբերի 1-ից ի վեր)

Լուզիուս Ուայլդհարեր (Շվեյցարիա), Նախագահ,  
Քրիստոս Ռոզակիս (Հունաստան), Նախագահի տեղակալ,  
Ժան-Պոլ Կոստա (Ֆրանսիա), Նախագահի տեղակալ,  
Նիկոլաս Բրացա (Բրիտանիա), Բաժանմունքի նախագահ,  
Բոստյան Ջուլյանչիչ (Սլովենիա), Բաժանմունքի նախագահ,  
Ջիովաննի Բոնելո (Մալտա),  
Լուցիուս Քաֆլիչ<sup>7</sup> (Շվեյցարիա),  
Լուկիս Լուկայդես (Կիպրոս),  
Իրենեու Կաբրալ Բարետո (Պորտուգալիա),  
Ռիգա Տուրմեն (Թուրքիա),  
Ֆրանսուազ Թուլքենզ (Բելգիա),  
Վիերա Ստրաժնիչկա (Սլովակիա),  
Կորնելիու Բիրսան (Ռումինիա),  
Պետր Լորենզեն (Ղանիա),  
Կարել Յունգվիերտ (Չեխիա),  
Վոլոդիմիր Բուտկեվիչ (Ուկրաինա),  
Ջոզեպ Կասադեվալ (Անդորրա),  
Նինա Վայիչ (Խորվաթիա),  
Ջոն Յեդիզան (Իռլանդիա),  
Վիլհելմինա Տոմասսեն (Հոլանդիա),  
Մաթթի Պելոնպաս (Ֆինլանդիա),  
Մարգարիտա Ցացա-Նիկոլավսկա (նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի  
Հանրապետություն),  
Անդրաշ Բակա (Հունգարիա),  
Ռեյթ Մարուստե (Էստոնիա),  
Կրիստաք Տրայա (Ալբանիա),  
Սնեյանա Բոտուչարովա (Բուլղարիա),  
Մինդիա Ուգրեխելիձե (Վրաստան),  
Անատոլի Կովլեր (Ռուսաստան),  
Վլադիմիր Ջագրեբելսկի (Իտալիա),  
Անտոնելլա Մուլարոնի (Սան-Մարինո),  
Էլիզաբեթ Շտայներ (Ավստրիա),  
Ստանիսլավ Պավլովսկի (Մոլդովիա)  
Լեչ Գարլիցկի (Լեհաստան),  
Խավիեր Բորեգո Բորեգո (Իսպանիա),  
Էլիզաբեթ Ֆուրա-Սանդստրոյոն (Շվեդիա),  
Ալվինա Գյուլունյան (Հայաստան),  
Խանլար Հաջին (Ադրբեջան),  
Լիլյանա Միժովիչ (Բոսնիա և Հերցեգովինա),  
Դին Սպիլման (Լյուքսեմբուրգ),  
Ռենատե Հանգեր (Գերմանիա),

<sup>5</sup> Ստանձնել է պաշտոնը 2004 թ. հոկտեմբերին՝ փոխարինելով Մարկ Ֆիշբախին, որը պաշտոնից հրաժարվել է 2004 թ. հունվարին:

<sup>6</sup> Մահացել է 2004 թ. մայիսին:

<sup>7</sup> Դատավոր՝ ընտրված Լիխտենշտեյնի փոխարեն:

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական քարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական  
կազմակերպության կողմից

Էգբերգ Միեր (Նիդեռլանդներ),  
Սվերե Էրիկ Յեբենս (Նորվեգիա),  
Դեյվիդ Թոր Բյորգվինսոն (Իսլանդիա),  
Դանուտե Յոցիենե (Լիտվա),  
Յան Սիկուտա (Սլովակիա), Դատավորներ,

Փոլ Մահոնի (Բրիտանիա), Քարտուղար,  
Էրիկ Ֆրայբերգ (Շվեդիա), Քարտուղարի տեղակալ,  
Լորենս Ըրլի (Բրիտանիա), Մեծ պալատի քարտուղարի տեղակալ:

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական  
կազմակերպության կողմից

**III. Ընդդատության զիջմամբ Մեծ պալատ հանձնված գործեր (Կոնվենցիայի  
30-րդ հոդված և Դատարանի կանոնակարգի 72-րդ կանոն)**

Հետևյալ 7 գործերը (որոնք վերաբերում են 12 զանգատների) հանձնվել են Մեծ  
պալատ համապատասխան Պալատների՝ ընդդատության զիջման մասին  
որոշումների համաձայն:

- (1) Von Maltzan and Others v. Germany (Ֆոն Մալտզանը և այլք ընդդեմ  
Գերմանիայի), no 71916/01  
Von Zitzewitz and Others v. Germany (Ֆոն Չիցեկիցը և այլք ընդդեմ  
Գերմանիայի), no. 71917/01/01  
Man Ferrostal and Alfred Topfer Stiftung v. Germany (Ման Ֆերոստալը և  
Ալֆրեդ Թոփֆեր Սթիֆունգն ընդդեմ Գերմանիայի), no. 10260/02**

2004 թ. հունվարի 29-ին հանձնվել են Երրորդ Բաժանմունքի կողմից  
(լսումները տեղի են ունեցել 2004 թ. սեպտեմբերի 22-ին: Տե՛ս V Գլուխը ստորև):

- (2) Bosphorus Airways v. Ireland (Բոսֆորուս Ավիաուղիներն ընդդեմ Իռլանդիայի),  
no. 45036/98**

2004 թ. հունվարի 30-ին հանձնվել է Չորրորդ Բաժանմունքի կողմից (լսումները  
տեղի են ունեցել 2004 թ. սեպտեմբերի 29-ին: տե՛ս V Գլուխը ստորև):

- (3) Makaratzis v. Greece (Մակարացիզն ընդդեմ Հունաստանի), no. 50385/99**

2004 թ. փետրվարի 5-ին հանձնվել է Առաջին բաժանմունքի կողմից (վճիռը  
կայացվել է 2004 թ. դեկտեմբերի 20-ին: Տե՛ս VII Գլուխը ստորև):

- (4) Roche v. United Kingdom (Ռոշն ընդդեմ Միացյալ Թագավորության), no.  
32555/96**

2004 թ. մարտի 25-ին հանձնվել է Երրորդ բաժանմունքի կողմից (լսումները տեղի  
են ունեցել 2004 թ. հոկտեմբերի 20-ին: Տե՛ս V Գլուխը ստորև):

- (5) Hepple and Others v. the United Kingdom (Հեփլը և այլք ընդդեմ Միացյալ  
Թագավորության), no. 65731/01 Kimber v. the United Kingdom, no. 65900/01**

2004 թ. օգոստոսի 24-ին Չորրորդ բաժանմունքի կողմից հանձնվել է Մեծ պալատ:  
Գործերը վերաբերում են 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի՝ սոցիալական  
նպաստների տարբեր խմբերի վրա կիրառելիությանը և նպաստներ ստանալու  
իրավասության հարցում ենթադրյալ սեռային խտրականությանը:

- (6) Draon and Others v. France (Դրաոնը և այլք ընդդեմ Ֆրանսիայի), no. 1513/03  
Maurice and Others v. France (Մորիսը և այլք ընդդեմ Ֆրանսիայի), no.  
11810/03**

2004 թ. հոկտեմբերի 19-ին հանձնվել են Երկրորդ բաժանմունքի կողմից:  
Գործերը վերաբերում են դիմումատուների կողմից հատուցման ենթակա  
վնասի չափը սահմանող օրենքում կատարված փոփոխության հետադարձ ուժ  
ունենալու հարցին: Դիմումատուները հաշմանդամ երեխաների ծնողներ են.  
հաշմանդամությունը չի բացահայտվել հղիության ընթացքում ախտորոշման

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական  
կազմակերպության կողմից

Ժամանակ թույլ տրված սխալի պատճառով: Օրենքը փոփոխության է ենթարկվել այն  
ժամանակ, երբ նրանց գործերը քննության էին առնվում ներպետական  
դատարանների կողմից: Գործերն առնչվում են 1-ին Արձանագրությունն թիվ 1-ին  
հոդվածի, 6-րդ, 8-րդ և 14-րդ հոդվածների դրույթներին:

**(7) Rasmussen v. Denmark (Ռասմուսենն ընդդեմ Դանիայի), no. 52620/99**  
**Sorensen v. Denmark (Սորենսենն ընդդեմ Դանիայի), no. 52562/99**

2004 թ. նոյեմբերի 25-ին հանձնվել են Առաջին բաժանմունքի կողմից:

Պրն. Ռասմուսենը նախկինում եղել է արհմիության անդամ: Նա կողմ չի եղել  
վերջինիս քաղաքական դիրքորոշմանը և հրաժարվել է անդամությունից և միացել է  
մեկ այլ արհմիության: Այնուհետև նրան պաշտոն է առաջարկել իր այժմյան  
գործատուն պայմանով, որ նա անդամակցի նախորդ արհմիությանը, որի հետ  
գործատուն ուներ համաձայնություն, ըստ որի իր բոլոր աշխատողները պետք է  
լինեին հենց այդ արհմիության անդամներ: Դիմումատուն համաձայնել է և ստացել  
աշխատանքը: Պրն. Սորենսենին ազատել են աշխատանքից, որովհետև նա հիշյալ  
արհմիությանը չի անդամակցել, չնայած աշխատանքի ընդունվելու ժամանակ  
վերջինիս հայտնի էր, որ աշխատանքը ստանալու նախապայմանը տվյալ  
արհմիության անդամակցությունն էր: Ըստ էության դիմումատուները բողոքում են, որ  
աշխատանքային հարաբերությունները կարգավորող ազգային օրենսդրությունը  
խախտում է Կոնվենցիայի 11-րդ հոդվածով երաշխավորված միավորվելու  
ազատության մասին իրենց բացասական [նեգատիվ] իրավունքը:

#### **IV. Մեծ պալատի հինգ հոգանոց Հանձնախմբի կողմից Մեծ պալատ հանձնված գործերը**

2004 թ. Մեծ պալատի հինգ հոգանոց Հանձնախումբը (Կոնվենցիայի 43-րդ հոդվածի 2-րդ կետ և Դատարանի Կանոնակարգի 24-րդ կանոնի 5-րդ կետ) հինգ նիստ գումարեց (2004 թ. մարտի 24-ին, հունիսի 14-ին, հուլիսի 7-ին, նոյեմբերի 10-ին և դեկտեմբերի 15-ին)՝ քննության առնելու կողմերի՝ գործերը Կոնվենցիայի 43-րդ հոդվածի համաձայն Մեծ պալատ՝ վերստին քննության համար ուղարկելու մասին խնդրանքները: Քննարկվեցին 121 գործերի մասին խնդրանքներ, որոնցից 56-ը ներկայացվել էին համապատասխան պետությունների կառավարությունների կողմից (գործերից հինգում խնդրանքներ էին ներկայացրել ինչպես կառավարությունը, այնպես էլ՝ դիմումատուն) (տե՛ս ցանկը հավելվածում):

Հանձնախումբն ընդունեց վերստին քննություն անկացնելու մասին խնդրանքները հետևյալ յոթ գործերի առնչությամբ.

##### **(1) Jahn and Others v. Germany (Ժանը և այլք ընդդեմ Գերմանիայի), nos. 46720/99, 72203/01 and 75552/01**

Դիմումատուները, Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Գերմանիայի՝ Խորհրդային Միության կողմից գրավված գոտում հողային բարեփոխումների արդյունքում ազգայնացված հողի նոր սեփականատերերի ժառանգներն են: Հողի հանդեպ լիիրավ սեփականությունը նրանց էր վերապահվել Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետության (ԳԴՀ) օրենքով, որն ուժի մեջ էր մտել 1990 թ. մարտին: Գերմանիայի վերամիավորումից հետո, 1992 թ. ընդունված օրենքն ամրագրում էր, որ նոր սեփականատերերի այն ժառանգները, ովքեր 1990 թ. մարտի 15-ին կամ դրան նախորդած տաս տարիների ընթացքում որևէ գործունեություն չեն ծավալել գյուղատնտեսության, անտառային տնտեսության և սննդի արդյունաբերության ոլորտում, ստիպված կլինեն այդ հողը վերադարձնել պետությանը: Քանի որ դիմումատուները չէին բավարարել հիշյալ չափանիշները, դատարանը պահանջել էր, որպեսզի նրանք հանձնեն իրենց հողը՝ առանց համապատասխան փոխհատուցում ստանալու:

Երրորդ բաժանմունքի Պալատը փաստերի ուսումնասիրության արդյունքում գտավ, որ խախտվել է 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը և հետաձգեց Կոնվենցիայի 41-րդ հոդվածի հիմքերով բարձրացված հարցի քննությունը:

##### **(2) Kyprianou v. Cyprus (Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի), no. 73797/01**

Դիմումատուն փաստաբան է, որին դատական քննության ընթացքում որպես դատապաշտպան հանդես գալու ժամանակ ընդհատում են Արտագնա դատարանի դատավորները, երբ փաստաբանը խաչաձև հարցաքննության էր ենթարկում վկային: Դիմումատուն շատ է բարկանում և ցանկանում է հրաժարվել գործից, սակայն, չստանալով դրա թույլտվությունը, ինքնատիրապետումը կորցրած պոռթկումնալից պատասխան է տալիս դատարանին: Դիմումատուին հնարավորություն է տրվում բացատրվել դատարանի առջև կամ ետ վերցնել իր դիտողությունները: Հարցի քննության նպատակով հայտարարված մի քանի ընդմիջումներից հետո այդ նույն դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչում դատարանի հանդեպ արհամարհալից վերաբերմունք հանդես բերելու մեջ և վերջինիս դատապարտում հինգ օր ազատազրկման: Գերագույն դատարանը մերժում է դիմումատուի բողոքը՝ գտնելով, որ դատարանի հանդեպ արհամարհանքի հարցի քննությունը ընդդատյա է Արտագնա դատարանին:

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական  
կազմակերպության կողմից

Երկրորդ Բաժանմունքի Պալատը գտավ, որ փաստերը առաջ են բերում 6-րդ  
հոդվածի 1-ին, 2-րդ և 3(ա)-րդ կետերի խախտումներ:

**(3) Nachova and Others v. Bulgaria (Նախովան և այլք ընդդեմ Բուլղարիայի), nos.  
43577/98 and 43579/98**

Ծնունդով ռոմացի երկու մարդ՝ դիմումատուների ազգակիցները, զինակոչիկներ  
էին, ովքեր պարտադիր զինվորական ծառայություն էին անցնում զինվորական մի  
ստորաբաժանումում, որը բնակարաններ էր կառուցում: Նրանք կալանքի են  
ենթարկում առանց թույլտվության կրկնվող բացակայությունների համար, երբ նրանք  
լքում են այն շինարարության տեղամասը, որին կցված էին և ապաստան գտնում  
նրանցից մեկի տատի տանը, որն ապրում էր գյուղի Ռոմա թաղամասում: Մի քանի օր  
անց զինվորական ոստիկանության ստորաբաժանմանը հայտնի է դառնում նրանց  
թաքստոցը և վերջինս Գ-ի ղեկավարության տակ զինվորական ոստիկանության չորս  
սպաների ուղարկում է գյուղ: Գ-ն զինված էր ատրճանակով և Կալաշնիկով մակնիշի  
ավտոմատ ինքնաձիգով: Փախստականները, նկատելով տան առջև կանգնած  
զինվորական մեքենան, փախուստի են դիմում: Վազելիս Գ-ն, կանգնելու համար  
նախազգուշացնող հրաման տալուց հետո, կրակում է նրանց ուղղությամբ: Երկուսն  
էլ մահանում են հիվանդանոց փոխադրելու ճանապարհին: Հարևաններից մեկը  
հայտնել էր, որ կրակում էին ոստիկաններից մի քանիսը, և ինչ-որ պահի Գ-ն  
կոպտորեն նրա վրա է պահել ատրճանակը և վիրավորել՝ ասելով «դուք, անիծյալ  
զնչուներ»: Ռազմական հետաքննության զեկույցի եզրակացության մեջ ասվում էր, որ  
Գ-ն գործել է օրենքի համաձայն և փորձել է փրկել փախստականների կյանքը՝  
նախազգուշացնելով նրանց կանգնել և չկրակելով նրանց կենսական նշանակություն  
ունեցող օրգանների վրա: Ջեկույցին կցված էր ճեպանկար-քարտեզ, որում  
բացակայում էին տեղանքի/վայրի մի շարք մանրամասներ և նկարագրություններ:  
Ռազմական դատախազն ընդունել էր եզրակացությունը և գործի քննությունը  
համարել ավարտված: Դիմումատուների հետագա բողոքները Ձինված ուժերի  
դատախազություն կողմից քննության չէին առնվել:

Առաջին բաժանմունքի Պալատը եզրակացրեց, որ խախտվել են Կոնվենցիայի 2-  
րդ (թե՛ նյութական և թե՛ դատավարական մասերը) և 14-րդ հոդվածները:

**(4) Hirst v. the United Kingdom (Հիրսթն ընդդեմ Միացյալ Թագավորության) (no. 2),  
no. 74025/98**

Դիմումատուն, որը մարդասպանության համար դատապարտվել է պայմանական  
ցմահ բանտարկության, «Ժողովրդի ներկայացուցչության մասին» 1983 թ.-ի Ակտի  
համաձայն իրավունք չունեք քվեարկել խորհրդարանական կամ տեղական  
ընտրությունների ժամանակ: Ցանկանալով ստանալ հաստատումն այն փաստի, որ  
հիշյալ դրույթը հակասում է Կոնվենցիային՝ դիմումատուն դատական կարգով հարցի  
վերանայման մասին պահանջ է ներկայացնում Վերին ատյանի դատարան երկու այլ  
բանտարկյալների հետ միասին, ովքեր, դիմել էին որպես ընտրողներ գրանցվելու  
համար:

Նրա հայցը լսել է Տարածքային դատարանը, որը սահմանել էր, որ չնայած նրան,  
որ այնքան էլ հեշտ չէ այնպիսի իրավաչափ նպատակ սահմանելը, ըստ որի  
դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում զրկվում է ընտրելու իրավունքից,  
այնուամենայնիվ ընդունված դիրքորոշմամբ բանտարկության ընթացքում  
բանտարկյալները զրկվում են իրենց այդ իրավունքից, ինչպես նաև կորցնում  
ընտրելու բարոյական իրավունքը: Հետևաբար՝ դիմումատուների, ինչպես նաև այլ  
բանտարկյալների պահանջները մերժվել էին: Բողոքարկելու թույլտվության մասին  
նրա գանգատները նույնպես մերժվել էին:

Զորրորդ Բաժանմունքի պալատը գտավ, որ խախտվել է 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածը:

**(5) Zdanove v. Latvia (Ժանովն ընդդեմ Լատվիայի), no. 58278/00**

Խորհրդային ժամանակաշրջանում դիմումատուն անդամակցել է Լատվիայի Կոմունիստական կուսակցությանը (ԼԿԿ), որը Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության շրջանային մասնաճյուղերից էր: 1990 թ. Լատվիայի Հանրապետությունը հռչակեց իր անկախության վերահաստատումը: Հաստատվեց անցումային ժամանակաշրջան, որի վերջնամպատակը պետության իրական սուվերենությունն աստիճանական վերականգնումն էր: Այս ժամանակաշրջանն ավարտվեց 1991 թ. օգոստոսի 21-ին պետության բացարձակ և անմիջական անկախության հռչակմամբ: Անցումային ժամանակաշրջանում պետական հեղաշրջման երկու փորձերին՝ 1991 թ. հունվարի 13-ին և օգոստոսին, մասնակցելու պատճառով ԼԿԿ-ն հայտարարվեց հակասահմանադրական և 1991 թ. սեպտեմբերին լուծարվեց: 1994 և 1995 թթ.-ին Լատվիայի խորհրդարանն ընդունեց համայնքային և խորհրդարանական ընտրությունների մասին երկու օրենք, որոնք համապատասխանաբար ամրագրում էին, որ 1991 թ. հունվարի 13-ից՝ կուսակցության կողմից սատարվող առաջին պետական հեղաշրջման օրվանից, հետո ԼԿԿ-ի գործունեությանն ակտիվորեն մասնակցած անձինք չեն կարող առաջադրվել որպես ընտրությունների թեկնածուներ: Մասնակցության փաստը պետք է հաստատեր դատարանը Գլխավոր դատախազի դիմումի հիման վրա: 1997 թ. դիմումատուին հաջողվել է առաջադրվել որպես տեղական ընտրությունների թեկնածու և նա ընտրվել է որպես Ռիգայի Քաղաքային խորհրդի անդամ: Դիմումատուն ստիպված է եղել հանել իր թեկնածությունը 1998 թ. խորհրդարանական ընտրություններից: 1999 թ. Գլխավոր դատախազությունից ստացված դիմումի հիման վրա դատարանները վճռել են, որ դիմումատուն անձամբ ներգրավված է եղել ԼԿԿ-ի գործունեության մեջ 1991 թ. հունվարի 13-ի շրջադարձային օրվանից հետո: Դիմումատուն ինքնաբերաբար որակագրվել է ընտրության ժամանակ իր թեկնածությունն առաջադրելուց և կորցրել իր տեղը Ռիգայի Քաղաքային խորհրդում: Օրենքի դրույթների վերաբերյալ դիմումատուի բողոքն անընդունելի է ճանաչվել 2000 թ. փետրվար ամսին: Դիմումատուի անունը հանվել է 2002 թ. խորհրդարանական ընտրությունների թեկնածուների ցուցակից:

Առաջին Բաժանմունքի պալատը եզրակացրեց, որ խախտվել են 1-ին Արձանագրության 3-րդ հոդվածը և Կոնվենցիայի 11-րդ հոդվածը, և սահմանեց, որ հարկ չկա դիմումատուի բողոքն առանձին քննության առնել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիմքերով:

**(6) Leyla Sahin v. Turkey (Լեյլա Շահինն ընդդեմ Թուրքիայի), no.44774/98**

1998 թ. փետրվարի 23-ին Ստամբուլի համալսարանի պրոռեկտորը շրջաբերական կարգադրություն է արձակում, որի համաձայն իսլամական գլխաշոր կրող ուսանողներին թույլ չի տրվում մասնակցել դասախոսություններին, դասընթացներին և դասախոսական կոնսուլտացիաներին: Դիմումատուն, որը կրում էր իսլամական գլխաշոր, գործով ներկայացված ժամանակահատվածում համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանող էր: 1998 թ. մարտի 12-ին նրան իսլամական գլխաշոր կրելու պատճառով թույլ չեն տալիս մասնակցել գրավոր քննությանը: 1998 թ. մարտի 20-ին համալսարանի ղեկավարությունը հրաժարվում է գրանցել նրան մի դասընթացի համար, 1998 թ. ապրիլի 16-ին նրան թույլ չեն տալիս մասնակցել դասախոսությանը, իսկ 1998 թ. հունիսի 10-ին մեկ այլ գրավոր քննության՝ միևնույն պատճառով: Դիմումատուն դիմում է հղում վարչական դատարաններ՝ պահանջելով այնպիսի

կարգի ընդունում, որով չեղյալ կհամարվի հիշյալ շրջաբերականը, սակայն նրա գանգատը մերժվում է վարչական դատարանների կողմից, որոնք սահմանում են, որ համապատասխան օրենսդրության, ինչպես նաև Սահմանադրական դատարանի և Գերագույն վարչական դատարանի որոշումների համաձայն՝ Համալսարանի պրոռեկտորն իրավունք ունի կարգավորել ուսանողական հագուստի հետ կապված հարցերը՝ կարգ ու կանոն պահպանելու նպատակով: Դատարանների հիշյալ վճիռների համաձայն՝ անօրինական չեն կարող համարվել ոչ համապատասխան օրենքները և ոչ էլ կոնկրետ կարգավորումները:

Չորրորդ Բաժանմունքի պալատը եզրակացրեց, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել և որ 9-րդ կամ 1-ին Արձանագրության 2-րդ հոդվածի ներքո՝ 8-րդ, 10-րդ և 14-րդ, հոդվածների համակցությամբ, առանձին հարց չի ծագում:

### **(7) Blečić v. Croatia (Բլեցիցն ընդդեմ Խորվաթիայի), no. 59532/00**

Դիմումատուն հատուկ պաշտպանված ռեժիմով բնակարանի վարձակալության իրավունք է ունեցել Խորվաթիայի Ջադար քաղաքում: 1991 թ. հուլիս ամսին նա հեռանում է բնակարանից՝ այցելելու արտասահմանում բնակվող իր դստերը: Հեռանալուց առաջ հատուկ պայմանավորվածություն է ձեռք բերում իր բացակայությամբ բնակարանը պահպանելու վերաբերյալ: Դիմումատուի բացակայության ժամանակը համընկնում է տարածաշրջանում մեծ թափ ստացած զինված հակամարտության և Ջադար քաղաքի անդադար ռմբակոծության հետ: Վերադառնալուն պես, 1992 թ. մայիս ամսին, դիմումատուն փորձում է վերստին ստանալ բնակարանը, սակայն այդ ժամանակ համայնքի իշխանությունները վարձակալության դադարեցման պահանջ են ներկայացնում դատարան նրա դեմ, այն հիմքով, որ դիմումատուի վեց ամսից ավելի տևած բացակայությունն անհիմն է եղել: Ավելին՝ տեղահանված անձանցից կազմված մի ընտանիք արդեն հաստատվել էր նրա բնակարանում: Դիմումատուն պնդում էր, որ ի վիճակի չի եղել վերադառնալու ավելի վաղ տարածաշրջանում առկա պատերազմական պայմանների, ճամփորդության համար անհամապատասխան իր առողջական վիճակի, ինչպես նաև այն պատճառով, որ իշխանությունները 1991 թ. հոկտեմբերին դադարել են վճարել իր թոշակը: Առաջին ատյանի դատարանն իր որոշմամբ սահմանել է, որ դիմումատուի բացակայությունը հիմնավորված չի եղել ոչ պատերազմի ոչ էլ վերջինիս կողմից նշված այլ պատճառներով: Դատարանը, այսպիսով, բավարարել է համայնքային իշխանությունների պահանջը և դիմումատուին զրկել հատուկ պաշտպանված ռեժիմով բնակարան վարձակալելու իրավունքից: Վճիռը բեկանվել է բողոքարկման արդյունքում, սակայն հետագայում այն անփոփոխ է թողնվել ինչպես Գերագույն դատարանի, այնպես էլ՝ Սահմանադրական դատարանի կողմից:

Առաջին Բաժանմունքի պալատը եզրակացրեց, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել, և հիմք ընդունելով կիրառելիությունը՝ չի խախտվել նաև 1-ին Արձանագրության 1-ին հոդածը:

## V. Լսումները

2004 թ. լսումներ են անցկացվել հետևյալ ինը գործերով (ամփոփ ներկայացված են միայն այն գործերը, որոնց կապակցությամբ վճիռ չի կայացվել մինչև տարվա վերջը):

### (1) Mamatkulov and Askarov v. Turkey (Մամատկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի), nos. 46827/99 and 46951/99

Գործ, որի կապակցությամբ անց են կացվել վերալսումներ: Գործի էության վերաբերյալ լսումները անց են կացվել 2004 թ. մարտի 17-ին:

Պրն. Մամատկուլովը Ղազախստանից տուրիստական վիզայով Ստամբուլ է ժամանում 1999 թ. մարտի 3-ին: Թուրքական ոստիկանությունը ձերբակալում է նրան Աթաթուրքի անվան օդանավակայանում (Ստամբուլ) և տանում ոստիկանության կալանավայր: Պրն. Ասկարովը կեղծ անձնագրով Թուրքիա է ժամանում 1998 թ. դեկտեմբերի 13-ին: Անվտանգության մարմինները 1999 թ. մարտի 5-ին նրան ձերբակալել և տարել են ոստիկանության կալանավայր:

Երկու տղամարդկանց կասկածում էին մարդասպանության, Ուզբեկստանում ռումբի պայթյունի հետևանքով վնասվածքներ պատճառելու, ինչպես նաև Հանրապետության Նախագահի նկատմամբ ահաբեկչական հարձակման փորձի մեջ: Նրանք բերվում են դատավորի առջև, և վերջինիս վճռով նրանց կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվում է: Ուզբեկստանը, Թուրքիայի հետ ունեցած երկկողմ համաձայնագրի ուժով, պահանջում է իրեն հանձնել հիշյալ անձանց:

Պրն. Մամատկուլովին հարցաքննում է Բակիրկոյի քրեական դատարանի դատավորը, իսկ պրն. Ասկարովին լսում է Ֆաթիհի քրեական դատարանը (Ստամբուլ) առջև: Դատավորը և դատարանը նշում են, որ այն հանցագործությունները, որոնցում մեղադրվում են դիմումատուները, իրենց բնույթով ոչ քաղաքական և ոչ էլ զինվորական են, այլ՝ պարզապես քրեական: Որոշում է կայացվում նախքան հանձնումը նրանց հանդեպ կիրառել կալանք:

1999 թ. մարտի 18-ին Դատարանի պալատը հրավիրում է թուրքական կառավարության ուշադրությունն այն հարցի վրա, որ Կանոնակարգի 39-րդ կանոնի (ժամանակավոր միջոցառումներ) համաձայն. «ի շահ կողմերի և վարույթի պատշաճ իրականացման ցանկալի չէր դիմումատուներին հանձնել Ուզբեկստանին՝ մինչև Դատարանին հնարավորություն կընձեռվեր իր մարտի 23-ի նիստում առավել հանգամանալից քննության առնել տվյալ գործը»: Այդ օրը պալատը երկարաձգում է ժամանակավոր միջոցառման ժամկետը մինչև հաջորդ ժամուցումը: Այդ ընթացքում, 1999 թ. մարտի 19-ին Թուրքիայի նախարարների կաբինետը հրամանագիր է ստորագրում դիմումատուների հանձնման մասին: Նրանք հանձնվում են Ուզբեկստանի իշխանություններին 1999 թ. մարտի 27-ին:

1999 թ. հունիսի 28-ի իր դատավճռով Ուզբեկստանի Հանրապետության Գերագույն դատարանը դիմումատուներին մեղավոր է ճանաչում վերոհիշյալ հանցագործությունների կատարման մեջ և նրանց համապատասխանաբար դատապարտում 20 և 11 տարվա ազատազրկման:

Ապավինելով Կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներին՝ դիմումատուները բողոքում են, որ հանձնումից հետո նրանց կյանքը ռիսկի տակ է և որ նրանք կանգնած են խոշտանգումների ենթարկվելու վտանգի առջև: Նրանք նաև, հիմք ընդունելով 6-րդ հոդվածը բողոքում են, որ Թուրքիայի հանձնման ընթացակարգը անարդարացի է եղել ինչպես նաև բողոքում են Ուզբեկստանում նրանց հանդեպ իրականացված քրեական դատավարության դեմ: Մատնանշելով այն փաստը, որ դիմումատուները հանձնվել են այլ պետությանը՝ նրանց ներկայացուցիչները պնդում են, որ Թուրքիան չի կատարել Կոնվենցիայի համաձայն ստանձնած իր պարտավորությունները և չի

գործել Կանոնակարգի 39-րդ կանոնի համաձայն Դատարանի կողմից տրված  
ցուցումներին համապատասխան:

2003 թ. փետրվարի 6-ին Պալատի կողմից կայացրած վճռում Դատարանը  
միաձայն վճռեց, որ որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել, որ 6-  
րդ հոդվածը չի տարածվում Թուրքիայի հանձնման գործընթացի վրա և որ որևէ հարց  
չի ծագում 6-րդ հոդվածի հիման վրա ներկայացված երկրորդ զանգատի  
առնչությամբ: Դատարանը վեց ձայնով ընդդեմ մեկի գտավ, որ խախտվել է  
Կոնվենցիայի 34-րդ հոդվածը, որովհետև Թուրքիան չի կատարել դատարանի կողմից  
մատնանշված ժամանակավոր միջոցառումները:

2003 թ. ապրիլի 28-ին կառավարությունը խնդրեց, որպեսզի գործը հանձնվի Մեծ  
պալատին: Մեծ Պալատի հանձնախումբը ընդունում է պահանջը 2003 թ. մայիսի 21-  
ին:

### **(2) Kopecky v. Slovakia (Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի), no. 44912/98**

Գործ, որի կապակցությամբ անց են կացվել վերալսումներ: Գործի էության  
վերաբերյալ լսումներն անց են կացվել 2004 թ. ապրիլի 7-ին:

Վճիռը կայացվել է 2004 թ. սեպտեմբերի 28-ին (տես VII Գլուխը ստորև):

### **(3) Ocalan v. Turkey (Օջալանն ընդդեմ Թուրքիայի), no. 46221/99**

Գործ, որի կապակցությամբ անց են կացվել վերալսումներ: Գործի էության  
վերաբերյալ լսումներն անց են կացվել 2004 թ. հունիսի 9-ին:

Գործը վերաբերում է Քրդստանի Աշխատավորների կուսակցության (ՔԱԿ) նախկին  
առաջնորդի զանգատին, կուսակցություն, որը Թուրքիայի օրենսդրությամբ  
համարվել է ահաբեկչական կազմակերպություն և որի նախկին առաջնորդն այժմ  
գտնվում է Իմրալի բանտում (Բուրսա, Թուրքիա): Հիշյալ իրադարձությունների  
ժամանակ թուրքական դատարանները պրն. Օջալանին ձերբակալելու մասին յոթ  
որոշում են կայացրել, իսկ Ինտերպոլը շրջանառության մեջ էր դրել վերջինիս  
հետախուզման մասին ծանուցումը (կարմիր ծանուցում): Նա մեղադրվում էր  
թուրքական պետության ամբողջականության և կյանքի դեմ ուղղված ահաբեկչական  
գործողությունների հրահրման նպատակ հետապնդող զինված խմբավորման  
ստեղծման մեջ:

1998 թ. հոկտեմբերի 9-ին նրան արտաքսում են Սիրիայից, որտեղ նա ապրում էր  
երկար տարիներ: Այնտեղից նա գնում է Հունաստան, Ռուսաստան, Իտալիա, իսկ  
այնուհետև նորից՝ Ռուսաստան և Հունաստան, իսկ հետո Կենյա, որտեղ 1999 թ.  
փետրվարի 15-ի երեկոյան, կասկածելի հանգամանքներում, Նայրոբիի  
օդանավակայանում, ինքնաթիռի մեջ նրան ձերբակալում են Թուրքիայի  
պաշտոնատար անձինք: Նրան անմիջապես տեղափոխում են Թուրքիա և թռիչքի  
ժամանակահատվածի մեծ մասի ընթացքում կապած պահում նրա աչքերը:

Թուրքիա ժամանելուն պես նրա գլխին կնգուղ են հագցնում և տեղափոխում  
Իմրալի բանտ, որտեղ նա ոստիկանական կալանքի տակ է պահվում 1999 թվականի  
փետրվարի 16-ից մինչև 23-ը և հարցաքննվում անվտանգության մարմինների  
կողմից: Այդ ժամանակահատվածում նա իրավաբանական օգնություն չի ստանում և  
փոխարենն անում է մի քանի ինքնամեղադրական հայտարարություններ, որոնք  
նպաստում են նրա մեղադրանքի հաստատմանը: Այդ ժամանակ Թուրքիայում  
գտնվող նրա փաստաբանին անվտանգության մարմիններն արգելում են այցելել  
իրեն: 1999 թվականի փետրվարի 23-ին 16 այլ փաստաբանների նույնպես մերժում  
են նման թույլտվությունը:

1999 թվականի փետրվարի 23-ին Անկարայի Անվտանգության պետական  
դատարանի դատավորը դիմումատուին նախնական կալանքի ենթարկելու մասին

որոշում է կայացնում: Փաստաբանների հետ նրա առաջին հանդիպումը սահմանափակվում է 20 րոպեով և տեղի ունենում անվտանգության ուժերի աշխատակիցների և դատավորի ներկայությամբ: Դիմումատուի և իր փաստաբանների հետագա հանդիպումներն անցնում են անվտանգության ուժերի աշխատակիցների հսկողության ներքո: Փաստաբանների առաջին երկու այցելություններից հետո, դիմումատուի շփումները նրանց հետ սահմանափակվում են շաբաթական երկու մեկժամյա այցելություններով: Բանտի ղեկավարությունը թույլ չտվեցին դիմումատուի փաստաբաններին մեղադրական եզրակացությունից բացի գործի այլ փաստաթղթերի պատճեններ տրամադրել նրան: Միայն 1999 թ. հունիսի 2-ի նիստից հետո է Անվտանգության պետական դատարանը թույլ տալիս դիմումատուին, երկու քարտուղարների հսկողությամբ, ծանոթանալ իր գործին առջվող փաստաթղթերին, իսկ փաստաբաններին՝ դիմումատուին տրամադրել որոշ փաստաթղթերի պատճենները:

1999 թվականի հունիսի 29-ին Անկարայի Անվտանգության պետական դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչում Թուրքիայի տարածքի մի հատվածի անջատմանը նպատակաուղղված գործողությունների ծավալման և այդ նպատակով զինված խմբավորման ստեղծման ու առաջնորդման մեջ: Դատարանը նրան դատապարտում է մահապատժի՝ համաձայն Քրեական օրենսգրքի 125 հոդվածի: Այդ դատավճռին առանց փոփոխման է թողնում նաև Վճռաբեկ դատարանը:

2002 թվականի օգոստոսի 9-ին հրապարակված թիվ 4771 օրենքի համաձայն՝ Թուրքիայի խորհրդարանը որոշում է ընդունում խաղաղ ժամանակ մահապատիժ չկիրառելու մասին: 2002 թվականի հոկտեմբերի 3-ին Անկարայի Անվտանգության պետական դատարանը փոխարինում է դիմումատուին մահապատժի ենթարկելու մասին դատավճիռը ցմահ բանտարկությամբ:

Ահաբեկչական հանցագործությունների համար դատապարտված անձանց նկատմամբ խաղաղ ժամանակ մահապատիժ չկիրառելու մասին դրույթն անօրինական ճանաչելու մասին գանգատը 2002 թվականի դեկտեմբերի 27-ին մերժվում է Սահմանադրական դատարանի կողմից:

Դիմումատուն բողոքում է, որ մահապատժի նշանակումը և/կամ իրականացումը եղել է և կմնա որպես Կոնվենցիայի 2-րդ հոդվածի (կյանքի իրավունք), 3-րդ հոդվածի (խոշտանգումների արգելում) և 14-րդ հոդվածի (խտրականության արգելում) խախտում, և որ պայմանները, որում նա Կենյայից տեղափոխվել է Թուրքիա և կալանքի ենթարկվել Իմրալի կղզում հավասարազոր էին անմարդկային վերաբերմունքի և հակասում էին 3-րդ հոդվածին: Նա նաև բողոքում էր, որ ի խախտումն 5-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի նրան անհապաղ չեն տարել դատավորի առջև և հնարավորություն չեն տվել վիճարկելու իրեն կալանքի ենթարկելու օրինականությունը: 6-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա նա բողոքում է, որ իրեն զրկել են արդարացի դատաքննության իրավունքից և որ իրեն չի դատել անկախ և անաչառ դատարանը՝ քանի որ Անվտանգության պետական դատարանի դատավորներից մեկը ռազմական դատավոր է եղել, որ դատավորների վրա ազդել են լրատվամիջոցների թշնամական հաղորդագրությունները և որ իր փաստաբաններին բավարար չափով թույլ չի տրվել ծանոթանալ իր գործի նյութերին, որպեսզի նրանք կարողանային պատշաճ կերպով պատրաստվել իր պաշտպանության համար: 34-րդ հոդվածի հիման վրա նա նաև բողոքում էր, որ Ամստերդամի իր օրինական ներկայացուցիչներին թույլ չի տրվել իր ձերբակալությունից հետո կապվել իր հետ և որ թուրքական կառավարությունը չի պատասխանել դատարանի՝ տեղեկություններ տրամադրելու մասին խնդրանքին:

Դիմումատուն այնուհետև վկայակոչում է Կոնվենցիայի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ և 18-րդ հոդվածները:

2003 թվականի մարտի 12-ի իր վճռում Դատարանի պալատը հաստատեց, որ խախտվել են 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը և 6-րդ հոդվածի 1-ին մասը և 3-րդ

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական  
կազմակերպության կողմից

մասի (բ) և (գ) կետերը, ինչպես նաև 3-րդ հոդվածը, քանի որ մահապատժի  
ենթարկելու մասին դատավճիռը կայացվել է անարդարացի դատավարության  
պայմաններում:

2003 թվականի հունիսի 9-ին Հանձնախումբն ընդունեց դիմումատուի և  
կառավարության կողմից՝ գործը Մեծ պալատ ուղարկելու մասին ներկայացված  
դիմումները 2003 թվականի հունիսի 5-ին և 11-ին՝ համապատասխանաբար:

**(4) Makaratzis v. Greece (Մակարացիզն ընդդեմ Հունաստանի), no. 50385/99**

Ընդդատության զիջման գործ: Գործի ըստ էության լսումներն անց են կացվել  
2004 թվականի հունիսի 30-ին:

Վճիռը կայացվել է 2004 թվականի դեկտեմբերի 20-ին (տես VII Գլուխը ստորև):

**(5) Cumpăna and Mazare v. Romania (Կումպանան և Մազարեն ընդդեմ  
Ռումինիայի), no. 33348/96**

Վերալսումների գործ: Գործի ըստ էության լսումներն անց են կացվել 2004  
թվականի սեպտեմբերի 1-ին:

Վճիռը կայացվել է 2004 թվականի դեկտեմբերի 17-ին (տես VII Գլուխը ստորև):

**(6) Pedersen and Baadsgaard v. Denmark (Պեդերսենը և Բաադսգարդն ընդդեմ  
Դանիայի), no 49017/99**

Վերալսումների գործ: Գործի ըստ էության լսումներն անց են կացվել 2004  
թվականի սեպտեմբերի 8-ին:

Վճիռը կայացվել է 2004 թվականի դեկտեմբերի 17-ին (տես VII Գլուխը ստորև):

**(7) Von Maltzan and Others v. Germany (Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ  
Գերմանիայի), no. 71916/01**

**Von Zitzewitz and Others v. Germany (Ֆոն Ջիցկիցը և այլք ընդդեմ  
Գերմանիայի), no. 71917/01**

**Man Ferrostal and Alfred Topfer Stiftung v. Germany (Ման Ֆերոստալը և  
Ալֆրեդ Թոփֆերն ընդդեմ Գերմանիայի), no. 10260/02**

Ընդդատության զիջման գործ: Գործի ըստ էության լսումները կայացել են 2004  
թվականի սեպտեմբերի 22-ին:

Գանգատները ներկայացվել են Գերմանիայի 68 քաղաքացիների և երկու  
իրավաբանական անձանց կողմից: Առաջին գանգատը ներկայացվել էր Վոլֆ-Ուլրիխ  
Ֆրայխեռ ֆոն Մալցանի և 45 այլ անձանց կողմից, երկրորդը՝ Մարգարիտ ֆոն  
Ջիցկիցի և 21 այլ անձանց կողմից, իսկ երրորդը Ալֆրեդ Թոփֆերի հիմնադրամի և  
Ման Ֆերոստալ կորպորացիայի կողմից:

Գանգատները վերաբերում են Գերմանիայի վերամիավորումից հետո  
բարձրացած լրջագույն հարցերից մեկին՝ այն անձանց փոխհատուցման  
պայմաններին, որոնց սեփականությունը ԳԴՀ-ի կողմից ազգայնացվել է 1949 թ-ից  
հետո կամ, դեպքերի գերակշռի մեծամասնությունում, 1945-ից 1949 թթ միջև ընկած  
ժամանակահատվածում խորհրդային ուժերի կողմից գրավված Գերմանիայի  
տարածքում: Փոխհատուցման և արդարացի բավարարման պայմաններն  
ամրագրված են 1994 թ. սեպտեմբերի 24-ին ընդունած Փոխհատուցման և արդարացի  
բավարարման մասին ակտում (Entschadigungs und Ausgleichsleistungsgesetz -  
EALG):

1995 թ. հունիսի 29-ին դիմումատուներից մի քանիսը դիմեցին Ֆեդերալ սահմանադրական դատարան՝ ի թիվս այլ հարցերի վիճարկելով այն հարցը, որ Ակտի որոշ դրույթներ հակասում են հիմնական օրենքին, քանի որ օրենքով նախատեսված փոխհատուցումը որպես կանոն պակաս է ազգայնացված ունեցվածքի իրական շուկայական արժեքից: 2000 թ. նոյեմբերի 22-ին Ֆեդերալ սահմանադրական դատարանի Առաջին բաժանմունքը (erster Senat) իր վերջնական վճռով առանց բավարարման թողեց դիմումատուների պահանջները: Այն դիմումատուները, ովքեր տվյալ գործով կողմ հանդես չեն եկել, այնուամենայնիվ, հղում են կատարում այդ վճռին:

Մի քանի Դիմումատուներ վիճարկում են, որ Փոխհատուցման և արդարացի բավարարման մասին 1994 թ. ակտը և Ֆեդերալ սահմանադրական դատարանի 2000 թ. վճիռը խախտում է սեփականության իրենց իրավունքը, որը պաշտպանվում է Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով, քանի որ իրենց ստացած փոխհատուցման գումարը շատ ավելի ցածր է, քան անօրինականորեն ազգայնացված իրենց ունեցվածի իրական արժեքը:

Դիմումատուները նաև բողոքարկում են, որ բացի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածից, իրենց հանդեպ խտրականություն է կիրառվել՝ ի խախտումն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի, քանի որ ի տարբերություն այլ մարդկանց՝ նրանք չեն կարողացել պահանջել այն սեփականության վերադարձի իրավունքը, որն անօրինականորեն ազգայնացվել է չնչին փոխհատուցման դիմաց:

Վերջապես, այն դիմումատուները, ովքեր զանգատ էին ներկայացրել Ֆեդերալ սահմանադրական դատարան, պնդում էին, որ այդ դատարանում վարույթի տևողությունը (չորս տարի և 11 ամիս մի գործով և հինգ տարի և չորս ամիս՝ մյուսով) գերազանցել է բոլոր խելամիտ ժամկետները՝ դրանով իսկ խախտելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը:

Ալֆրեդ Թոփֆերի հիմնադրամը և Ման Ֆերոստալը բարձրացնում են միևնույն բողոքը՝ մատնանշելով, որ փոխհատուցման և արդարացի բավարարման մասին 1994 թվականի ակտի համաձայն՝ նրանք ոչ իրավունք ունեն պահանջելու իրենց սեփականության վերադարձը ոչ էլ որևէ փոխհատուցում պահանջելու դրա փոխարեն:

**(8) Bosphorus Airways v. Ireland (Բոսֆորուս Ավիաուղիներն ընդդեմ Իռլանդիայի),  
no. 45036/98**

Ընդդատության զիջման գործ: Գործի ըստ էության լսումները կայացել են 2004 թվականի սեպտեմբերի 29-ին:

Գործը վերաբերում է Թուրքիայում գրանցված ավիաուղիների չարտերային ընկերության կողմից ներկայացված զանգատին. ընկերությունը կոչվում է Bosphorus Hava Yollari Turizm ve Ticaret Anonim Sirketi («Բոսֆորուս Ավիաուղիներ»):

1993 թվականի մայիսին դիմումատու ընկերության կողմից հարավսլավական ավիաուղիներից (JAT) վարձակալված ինքնաթիռը արգելանքի տակ է դրվում Իռլանդիայի իշխանությունների կողմից: Այն վերանորոգման նպատակներով գտնվում էր Իռլանդիայում TEAM Aer Lingus-ի՝ ամբողջությամբ Իռլանդիայի սեփականությունը հանդիսացող ինքնաթիռների տեխնիկական սպասարկման մի ընկերության մոտ, և արգելանքի տակ է դրվում ԵՄ-ի խորհրդի կանոնների համաձայն, որոնք իրենց հերթին կիրարկում են Հարավսլավիայի Ֆեդերալ Հանրապետության (Սերբիա և Չերնոգորիա) դեմ ՄԱԿ-ի պատժամիջոցների ռեժիմը:

Ինքնաթիռն արգելանքի տակ դնելու դեմ ուղղված Դիմումատուի բողոքը բավարարվում է Վերին դատարանի կողմից, որը 1994 թվականի հունիսի իր վճռում սահմանեց, որ Խորհրդի՝ խնդրո առարկա կանոնները կիրառելի չեն ինքնաթիռի առնչությամբ: Սակայն, ի պատասխան բողոքարկման, Գերագույն դատարանը հարցը

EEC-ի համաձայնագրի 177-րդ հոդվածի համաձայն ուղարկում է Արդարադատության եվրոպական դատարան («ECJ»)՝ պարզելու, թե արդյոք գանգատարկուի ինքնաթիռի հարցում գործում են Խորհրդի կանոնները: Պատասխանը հաստատական էր և 1996 թվականի նոյեմբերի իր վճռով Գերագույն դատարանը հաստատում է ԱԵԴ-ի որոշումը և բավարարում պետության բողոքը:

Իսկ այդ ընթացքում դիմումատուի կողմից ինքնաթիռի վարձակալության ժամկետն արդեն սպառված է լինում: Քանի որ Հարավսլավիայի Ֆեդերալ Հանրապետության (Սերբիա և Չերնոգորիա) դեմ պատժամիջոցների ռեժիմը նույնպես մեղմացվել էր մինչ այդ օրը, Իռլանդիայի իշխանություններն ինքնաթիռն ուղղակիորեն վերադարձնում են JAT-ին: Դիմումատուի ինքնաթիռը միակն է եղել, որ երբևէ արգելանքի տակ է դրվել ԵՄ-ի և ՄԱԿ-ի վերը նշված կարգերի համաձայն:

Դիմումատուն Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով բողոքարկում է, որ ստիպված է եղել շատ ավելի մեծ բեռ կրել Իռլանդիայի կառավարության կողմից պատժամիջոցների ռեժիմի կիրառման արդյունքում և որ էական ֆինանսական կորուստներ է կրել:

2001 թվականի սեպտեմբերի 13-ին Ղատարանի պալատը լսումներ անցկացրեց գանգատի ընդունելիության և էության վերաբերյալ և այդ նույն օրը գործն ընդունելի հռչակեց: 2004 թվականի հունվարի 30-ին Պալատը զիջեց ընդդատությունը հօգուտ Մեծ Պալատի:

**(9) Roche v. the United Kingdom (Ռոշն ընդդեմ Միացյալ Թագավորության), no. 32555/96**

Ընդդատության զիջման գործ: Գործի ըստ էության լսումները կայացել են 2004 թվականի հոկտեմբերի 20-ին:

1953 թվականին դիմումատուն միացել է Բրիտանական բանակին և պաշտոնաթող եղել 1968 թվականին պատճառներով, որոնք որևէ առնչություն չունեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանում իր գործին:

1987 թվականին նրա մոտ արյան բարձր ճնշում է ի հայտ եկել և այժմ նա տառապում է հիպերտոնիկ հիվանդությամբ, շնչուղիների խրոնիկ հիվանդությամբ (բրոնխիտ) և բրոնխիալ աստմայով: Չի աշխատել սկսած 1988 թվականից և հաշվառված է որպես հաշմանդամ: Նա պնդում է, որ իր առողջական պրոբլեմները հետևանք են այն բանի, որ ինքը 1962 և 1963 թվականներին մասնակցել է Բրիտանական զինված ուժերի կողմից Քիմիական և կենսաբանական պաշտպանության հաստատությունում (CBDE) անցկացված մանանեխի և նյարդերի գազի թեստերին. հաստատությունը գտնվում է Porton Down զորանոցում (Անգլիա): Չկա որևէ փաստաթուղթ, որը կվկայեր այն մասին, որ նա մասնակցել է նման թեստերի 1962 թվականին, սակայն չի վիճարկվում այն հանգամանքը, որ 1963 թվականին նա թերևս մասնակցել է նման թեստերի:

1987 թվականից ի վեր դիմումատուն ակտիվորեն փորձել է ստանալ իր ծառայությանը վերաբերող փաստաթղթերը՝ ինչպես բժշկական, այնպես էլ քաղաքական ուղիներով, սակայն այդ փորձերը բոլորը չէ, որ հաջողությամբ են պսակվել: 1991 թվականի հունիսի 10-ին նա ծառայության թոշակի պահանջ է ներկայացրել: 1992 թվականի հունվարի 28-ին Պետքարտուղարը մերժել է թոշակի՝ նրա պահանջը, քանի որ դիմումատուն չի կարողացել պատճառահետևանքային կապ ցույց տալ թեստերի և իր առողջական վիճակի միջև:

1994 թվականին նա սպառնացել է դատական գործ հարուցել՝ ի թիվս այլ հարցերի մեղադրելով Պաշտպանության նախարարությանը անբարեխղճության մեջ: 1995 թ. օգոստոսի 3-ին Պետքարտուղարը հավաստագիր է արձակել 1947 թվականի «Թագի դատավարության» Ակտի 10-րդ բաժնի համաձայն, որը արդյունավետությամբ արգելափակում է նման գործի հարուցումը 1987 թվականից առաջ տեղի ունեցած

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգմանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական  
կազմակերպության կողմից

դեպքերի առնչությամբ, սակայն միևնույն ժամանակ համապատասխան անձանց  
թույլ է տալիս դիմել ծառայության թոշակ ստանալու պահանջով:

1998 թվականի նոյեմբերին *McGinley and Ega v. the United Kingdom*  
(ՄքՁինլին և Էգանն ընդդեմ Միացյալ Թագավորության) գործով 1998 թվականի  
հունիսի 9-ի վճռի կայացումից հետո դիմումատուն դիմել է Թոշակների հարցով  
բողոքարկման դատարան (PAT): Նա դիմել է պաշտոնական տեղեկությունների  
հրապարակման պահանջով, մի բան, որ միանգամայն օրինական է PAT-ի  
կանոնակարգի 6-րդ (1) կանոնի համաձայն, ինչը թույլ կտար PAT-ին որոշել, թե  
արդյոք իր հիվանդության ի հայտ գալու կամ սրվելու պատճառը Porton Down-ի  
գազային թեստերն էին, թե ոչ: 2001 թվականի փետրվարին PAT-ը հանձնարարում է  
Պաշտպանության նախարարությանը հրապարակել փաստաթղթերի որոշ տեսակներ  
և 2001 և 2002 թվականներին որոշ փաստաթղթեր հրապարակվում են: PAT-ը գործի  
էության հիման վրա որոշում է չբավարարել դիմումատուի պահանջը: Նա որոշումը  
բողոքարկում է Վերին աստիճանի դատարան, որն ուղարկում է գործը PAT:

Դիմումատուն բողոքում է, որ իրեն չեն տրամադրել համապատասխան  
տեղեկություններ այն թեստերի մասին, որոնց ինքը ենթարկվել է Porton Down-ում,  
ինչը հակասում է Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածներին: Նա նաև բողոքում է, որ  
Պետքարտուղարի կողմից 1947 թվականի ապրիլի 10-րդ բաժնի համաձայն արձակված  
հավաստագիրը խախտում է դատարանի մատչելիության իր իրավունքը, որը  
երաշխավորված է 6-րդ հոդվածի 1-ին մասով և 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը  
` առանձին և 14-րդ հոդվածի հետ համակցությամբ: Նա այնուհետև վկայակոչում է 13-  
րդ հոդվածը:

## VI. Ընդունելիության մասին որոշում

Մեծ պալատը անընդունելի է համարել ներքոնշյալ գանգատը: Գանգատը մերժվել է Դատարանի պալատի կողմից 2002 թվականի դեկտեմբերի 12-ին Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն:

### **Senator Lines GmbH v. 15 Member States of the European Union (Սենատոր Լայնզ GmbH-ն ընդդեմ Եվրամիության 15 անդամ պետությունների), no. 56672/00**

1998 թվականին Եվրահանձնաժողովը 13,750,000 եվրո տուգանք է նշանակել դիմումատու ընկերության նկատմամբ Եվրահամայնքի մրցակցության մասին կանոնները խախտելու համար: Դիմումատուին տեղեկացրել են, որ տուգանքն անհապաղ չի կիրառվի, եթե որոշումը բողոքարկվի անմիջապես և ներկայացվի նաև բանկային երաշխիք: Դիմումատուն բողոքարկել է որոշումը Եվրահամայնքի Առաջին ատյանի դատարան (CIF), ինչպես նաև խնդրել ազատել իրեն բանկային երաշխիք տրամադրելու պարտավորությունից: Խնդրանքը մերժվել է, քանի որ Եվրահանձնաժողովը համարել է, որ դիմումատուի ընկերությունը կարող է ներկայացնել բանկային երաշխիք: Դիմումատուի՝ CIF-ին ուղղված հաջորդ դիմումը՝ տուգանքի մասին որոշման իրականացումը կասեցնելու վերաբերյալ, մերժվել է Նախագահի կողմից, որը եզրակացրել է, որ դիմումատուն ի վիճակի չի եղել տրամադրելու բանկային երաշխիքը, սակայն համարել է, որ պետք է հաշվի առնել այն մի քանի ձեռնարկությունները, որոնց պատկանել է դիմումատուն: Այս որոշման դեմ դիմումատուի բողոքը մերժվել է Եվրահամայնքի Արդարադատության դատարանի Նախագահի կողմից, որը հաստատել է, որ թույլ տրվում է հաշվի առնել ձեռնարկությունների այն խմբի գույքը, որին պատկանում է դիմումատուն: 2003 թվականին CFI-ը չեղյալ է հայտարարել այն տուգանքները, որոնք նշանակվել են 1998 թվականին: Դիմումատուն, մասնավորապես բողոքարկում է, որ տուգանքի կիրառումը նախքան վարույթի հարցով դատական վճռի կայացումը կնշանակի դատական ծառայություններից օգտվելու իր իրավունքի ոտնահարում:

2004 թվականին մարտի 10-ին ընդունած իր որոշման մեջ Մեծ պալատը միաձայն գանգատն անընդունելի հռչակեց այն հիմքի վրա, որ CFI-ի կողմից տուգանքի չեղյալ հայտարարելուց հետո դիմումատուն այլևս չի կարող պնդել, որ ինքը տուժող կողմ է:

## VII. Վճիռներ

### (1) *Perez v. France* (Պերեզն ընդդեմ Ֆրանսիայի), no. 47287/99

1995 թվականի հուլիսին դիմումատուն գնում է տեղական ժանդարմություն՝ բողոք ներկայացնելու այն հարցի կապակցությամբ, որ հարձակման է ենթարկվել սեփական որդու և դստեր կողմից: Նա հայտնել է, որ իր երկու երեխաները եկել էին տեսնելու իրեն ապրուստի միջոցներ վճարելու հարցով իրենց միջև ծագած դատական վեճի կապակցությամբ: Մինչ նրանք երեքը միասին գտնվում էին մեքենայում, որի դեկին նստած էր իր դուստրը, դիմումատուի որդին, իր պնդմամբ, օգտվելով ներարկիչից, անհայտ ինչ-որ նյութ երկու անգամ ներարկում է իր մարմնի մեջ: Դրանից անմիջապես հետո ներարկման նշանները հայտնաբերվում են դիմումատուի մարմնի վրա և ժանդարմներն ավելի ուշ հայտնաբերում են Վալիումի հետքեր պարունակող ներարկիչներ: Սկսվում է դատական քննություն զենքով հարձակում գործելու հիմքի վրա: Քննության ընթացքում դիմումատուն միանում է վարույթին՝ որպես քաղաքացիական կողմ:

1997 թվականի մարտի 14-ին քննությունը վարող դատավորը որոշում է, որ հանցակազմ չկա, որովհետև հանցագործության կատարման ապացույցները բավարար չեն: Հիշյալ որոշման դեմ դիմումատուի բողոքը մերժվում է այն հիմքի վրա, որ վերջինս բաց է թողել բողոքարկելու՝ օրենքով սահմանված վերջնաժամկետը: Օրենքի դրույթների դեմ վերջինիս բողոքը նույնպես մերժվում է 1998 թվականի ապրիլի 21-ին Վճռաբեկ դատարանի Քրեական բաժանմունքի կողմից:

Գանգատը ընդունելի էր համարվել 2003 թվականի հունվարի 30-ին Դատարանի պալատի կողմից: 2003 թվականի հունիսի 5-ին այդ նույն Պալատը զիջում է ընդդատությունը Մեծ պալատին:

Ֆրանսիական կառավարությունը պնդում է, որ 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի չէ, քանի որ դիմումատուն բողոք չի ներկայացրել հանցագործության պատճառով ուղղակիորեն պատճառված վնասի փոխհատուցման վարույթի ընթացքում: Դիմումատուի համար, իմպերատիվ պահանջ էր 6-րդ հոդվածը կիրառել այն պահից սկսած ինչ վարույթին միացել է քաղաքացիական կողմը՝ անկախ այն բանից գործը քննության մեջ է, թե արդեն ավարտվել է:

2004 թվականի փետրվարի 12-ին կայացրած իր վճռում Մեծ պալատը միաձայն եզրակացրեց, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի է վիճարկվող ներքին վարույթների նկատմամբ, սակայն սույն գործի էությանը հիշյալ դրույթի խախտում թույլ չի տրվել:

### (2) *Gorzelik and Others v. Poland* (Գորզելիքը և այլք ընդդեմ Լեհաստանի), no. 44158/98

Գործը վերաբերում է Վերին Սիլեսիայի բնակիչ հանդիսացող երեք լեհ քաղաքացիների կողմից ներկայացրած գանգատին: Դիմումատուները և 190 այլ անձինք փորձել են մի միավորում ստեղծել, որը կոչվում էր «Ազգությամբ սիլեսիացիների միություն» (*Zwiazek Ludnosci Narodowosci Slaskiej*): Լեհաստանի իշխանությունները մերժել են գրանցել միավորումը այն պատճառաբանությամբ, որ նախատեսված անվանումը, ինչպես նաև միության հուշագրի որոշ դրույթներ, որոնք բնորոշում են սիլեսիացիներին որպես «ազգային փոքրամասնություն», հուշում են, որ նրանց իրական մտադրությունը ընտրական օրենսդրության դրույթները շրջանցելն է: Բացի այդ, եթե Միության անդամները ճանաչվեին որպես «ազգային փոքրամասնություն», նրանք ինքնաբերաբար կստանային անվերապահ և օրենքով պարտադրվող արտոնություններ: Որոշման դեմ բերված բողոքները մերժվել են:

Դիմումատուները բողոքել են, որ Լեհաստանի իշխանությունները կամայականորեն մերժել են գրանցել իրենց միավորումը: Նրանք այնուհետև ավելացրել են, որ Լեհաստանում ազգային փոքրամասնություն հասկացության օրինական սահմանման բացակայությունը, ինչպես նաև այն ընթացակարգերի բացակայությունը, որոնց համաձայն նման փոքրամասնությունը կկարողանար ճանաչում ստանալ ներքին օրենքով, անհնարին է դարձնում նրանց համար այն չափանիշների կանխորոշումը, որոնց բավարարելու դեպքում միայն իշխանությունները կգրանցեին իրենց միավորումը: Նրանք վկայակոչում են Կոնվենցիայի 11-րդ հոդվածը:

2001 թվականի դեկտեմբերի 20-ի Պալատի որոշմամբ Դատարանը եզրակացրեց, որ 11-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

Դիմումատուները խնդրել են, որ գործն ուղարկվի Մեծ պալատ և Մեծ պալատի հանձնախումբը 2002 թվականի հուլիսի 10-ին ընդունել է դիմումը: Լսումներն անց են կացվել 2003 թվականի հուլիսի 2-ին:

2004 թվականի փետրվարի 17-ին կայացրած վճռում Մեծ պալատը միաձայն կարգով եզրակացրել է, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

### **(3) Maestri v. Italy (Մաեստրին ընդդեմ Իտալիայի), no. 39748/98**

Դիմումատուն դատավոր է և գանգատը ներկայացնելու ժամանակ վարել է Լա Սպեզիա շրջանային դատարանի Նախագահի պաշտոնը:

1993 թվականի նոյեմբերին նրա դեմ 1946 թվականի մայիսի 31-ի Թագավորական օրենսդրական հրամանագրի 18-րդ հոդվածի համաձայն սկսվել է կարգապահական վարույթ 1981 թվականից մինչև 1993 թվականի մարտ *Grande Oriente d'Italia di Palazzo Giustiniani* մասոնական օբյակի անդամ լինելու համար:

1995 թվականի հոկտեմբերի 10-ի իր որոշմամբ Դատավորների Ազգային խորհուրդը եզրակացրել է, որ դիմումատուն կատարել է այն հանցագործությունը, որում մեղադրվում և նկատողություն (*censura*) հայտնել վերջինիս: Կարգապահական բաժանմունքը հայտարարել է, որ կարգապահական կանոնները թույլ չեն տալիս դատավորին լինել Ազատ մասոն, քանի որ մասոնական և դատական երդումներն անհամատեղելի են, այլ է Ազատ մասոնների աստիճանակարգը. նրանք մերժում են պետական արդարադատությունը հօգուտ մասոնական արդարադատության և Ազատ մասոնների միջև գոյություն ունեն անքակտելի բնույթի կապեր: Որոշումը վկայակոչում էր նաև 1990 թվականի մարտին և 1993 թվականի հուլիսին Դատական իշխանության ազգային խորհրդի կողմից արձակած հրահանգները, որոնք ընդգծում էին Ազատ մասոնական կազմակերպությանն անդամակցելու և դատական իշխանության անդամակցության միջև եղած անհամատեղելիությունը:

Դիմումատուն օրենքի դրույթների դեմ բողոք է ներկայացնում Վճռաբեկ դատարան, որը 1996 թվականի դեկտեմբերի 20-ին մերժում է բողոքը:

Դիմումատուն պնդում է, որ Ազատ մասոն լինելու համար իր հանդեպ կիրառած պատժամիջոցը Կոնվենցիայի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների խախտում է:

Գանգատն ընդունելի է հռչակվել Պալատի կողմից 2002 թվականի հուլիսի 4-ին: 2002 թվականի հոկտեմբերի 10-ին Պալատը զիջել է ընդդատությունը Մեծ պալատին: 2003 թվականի հունիսի 25-ին անց են կացվել Լսումներ:

2004 թվականի փետրվարի 17-ին կայացրած վճռում Մեծ պալատը 11 ձայնով ընդդեմ 6-ի եզրակացրեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում:

**(4) Tahsin Acar v. Turkey (Թահսին Ակարն ընդդեմ Թուրքիայի), no. 26307/95**

Գործը վերաբերում է դիմումատուի եղբոր՝ Մեհմետ Սալիմ Ակարի անհետացմանը, ով ֆերմեր էր Ամբար գյուղում, որը գտնվում է Թուրքիայի հարավ-արևելյան հատվածում գտնվող Բիսմիլ շրջանում: Ըստ դիմումատուի՝ նրա եղբորն առևանգել են 1994 թ, օգոստոսի 20-ին երկու անձ, որոնց ինքնությունը պարզ չէ, սակայն որոնք, ենթադրաբար, քաղաքացիական հագուստով ոստիկաններ են եղել: Մեհմետ Սալիմ Ակարի ընտանիքը բազմաթիվ դիմումներ և խնդրանքներ է հղել իշխանություններին վերջինիս անհետացման մասին՝ պարզելու, թե որտեղ և ինչու է կալանքի տակ առնվել վերջինս: Ըստ կառավարության՝ դիմումատուի եղբոր առևանգումից և անհետացումից հետո իրավասու մարմիններն իրականացրել են պատշաճ հետաքննություն: Նրա անունը դեռևս այն անձանց ցուցակում է, որոնք փնտրվում են Թուրքիայի ժանդարմական ուժերի կողմից:

2001 թվականի օգոստոսի 27-ին թուրքական կառավարությունը Դատարան է ուղարկում միակողմ հայտարարության տեքստ, որում ավստոսանք է հայտնում գանգատի պատճառ հանդիսացած գործողությունների համար և առաջարկում դիմումատուին անվերադարձ վճարել 70,000 ֆունտ ստերլինգ ցանկացած նյութական և ոչ նյութական վնասի և ծախսերի համար: Կառավարությունը խնդրում է Դատարանին՝ գործը Կոնվենցիայի 37-րդ հոդվածի հիման վրա հանել ցուցակից: Դիմումատուն խնդրում է Դատարանին մերժել կառավարության նախաձեռնությունը՝ բողոքարկելով, որ հայտարարության պայմանները բավարար չեն: Մասնավորապես, նա նշում է, որ հայտարարագրում չի ընդունվում, որ իր գանգատը ներկայացվել է Կոնվենցիայի խախտման հիմքերով և որ իր եղբայր Մեհմետ Սալիմ Ակարին առևանգել են պետական գործակալները և որ նրան պետք է մահացած համարել, որ այնտեղ նշված չէ, որ քննություն կծեռնարկվի գործի հանգամանքներն ուսումնասիրելու նպատակով և որ փոխհատուցումը տրվելու է անվերադարձ:

2002 թվականի ապրիլի 9-ի իր վճռում Դատարանի պալատը, վեց ձայնով ընդդեմ մեկի, որոշեց գործը հանել քննությունից: 2002 թվականի հունիսի 8-ին դիմումատուն խնդրեց գործն ուղարկել Մեծ Պալատ: 2002 թվականի սեպտեմբերի 4-ին Մեծ պալատի հանձնախումբն ընդունեց այդ դիմումը: Լսումներն անցկացվեցին 2003 թվականի հունվարի 29-ին:

2003 թվականի մայիսի 6-ի իր վճռում (նախնական) Մեծ պալատը, 16 ձայնով ընդդեմ 1-ի, որոշեց մերժել կառավարության՝ գանգատը ցուցակից հանելու մասին խնդրանքը և շարունակել գործի ըստ էության քննությունը: 2004 թվականի ապրիլի 8-ի իր վճռում (ըստ գործի էության) Մեծ պալատը միաձայն վճռեց, որ 2-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել դրա նյութական մասով, սակայն պատասխանող պետությունը թույլ է տվել խախտում այդ դրույթից բխող իր դատավարական պարտավորությունների կատարման հարցում: Այն նաև միաձայն վճռեց, որ Կոնվենցիայի 5-րդ, 6-րդ, 8-րդ և 18-րդ հոդվածների խախտում տեղի չի ունեցել և որ պատասխանող պետությունը չի կատարել Կոնվենցիայի 38-րդ հոդվածի համաձայն իր կողմից ստանձնած պարտավորությունները:

**(5) Assanidze v. Georgia (Ասանիձեն ընդդեմ Վրաստանի), no. 71503/01**

Դիմումատուն՝ Թենգիզ Ասանիձեն, Վրաստանի քաղաքացի է, որը ծնվել է 1944 թվականին: Գանգատը ներկայացնելու պահին նա կալանքի մեջ էր Բաթումիում՝ Վրաստանում Աջարիայի Ինքնավար Հանրապետության մայրաքաղաքում: Նախկինում նա զբաղեցրել է Բաթումիի քաղաքապետի պաշտոնը և եղել է Աջարիայի Գերագույն խորհրդի պատգամավոր:

Նրան մեղադրել են Բաթումիի ժխախտագործական ընկերությունում անօրինական ֆինանսական գործարքներ կատարելու, ինչպես նաև հրազենի

անօրինական տիրապետման և գործածության մեջ: 1994 թվականի նոյեմբերի 28-ին նրան դատապարտում են ութ տարի ազատազրկման և կարգադրություններ են տրվում, որպեսզի նրա գույքը բռնագրավվի և որ նա փոխհատուցի ընկերության կրած նյութական կորուստները: 1995 թվականի ապրիլի 27-ին Վրաստանի Գերագույն դատարանը, օրենքի հիման վրա ներկայացված բողոքի կապակցությամբ հաստատում է անօրինական ֆինանսական գործարքների համար դիմումատուի հանդեպ կայացված մեղադրական դատավճիռը: 1999 թվականի հոկտեմբերի 1-ին դիմումատուին ներում է շնորհում Հանրապետության Նախագահը, սակայն Աջարիայի տեղական իշխանությունները նրան ազատ չեն արձակում:

Մինչ դիմումատուն դեռևս ազատազրկման մեջ էր (չնայած, որ նրան ներում էր շնորհվել), 1999 թվականի դեկտեմբերի 11-ին նրան ներկայացվում են նոր մեղադրանքներ այս անգամ առևանգման գործի առնչությամբ: 2000 թվականի հոկտեմբերի 2-ին Աջարիայի Գերագույն դատարանը մեղավոր է ճանաչում դիմումատուին և վերջինիս դատապարտում տասներկու տարի ազատազրկման: Չնայած նա այնուհետև, 2001 թվականի հունվարի 29-ին, անմեղ է ճանաչվում Վրաստանի Գերագույն դատարանի կողմից, Աջարիայի իշխանությունները նրան ազատ չեն արձակում: Այսպիսով՝ նա ավելի քան երեք տարի ազատազրկման մեջ է անցկացնում Աջարիայի Անվտանգության նախարարության Կարճաժամկետ կալանավայրում:

Դիմումատուն բողոքում է, որ Աջարիայի Ինքնավար հանրապետության իշխանություններն իրեն դեռևս ազատազրկման մեջ են պահում ի հեճուկս այն փաստի, որ 1999 թվականին իրեն ներում է շնորհվել Նախագահի կողմից առաջին հանցագործության համար, իսկ Վրաստանի Գերագույն դատարանը 2001 թվականին իրեն արդարացրել է երկրորդ հանցագործության հարցում: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1,3,4-րդ մասերը, 6-րդ հոդվածի 1-ին մասը, 10-րդ և 13-րդ հոդվածները և 4-րդ Արձանագրության 2-րդ հոդվածը:

Գանգատը մասնակիորեն ընդունելի է ճանաչվել 2002 թվականի նոյեմբերի 12-ին: 2003 թվականի մարտի 18-ին Պալատը զիջել է ընդդատությունը Մեծ պալատին: Լսումներն անց են կացվել 2003 թվականի նոյեմբերի 19-ին:

2004 թվականի ապրիլի 8-ին կայացրած իր վճռում Մեծ պալատը միաձայն եզրակացրեց, որ բողոքարկվող հարցերը Կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն գտնվում են Վրաստանի «ընդդատության» ներքո և որ միայն Վրացական պետության պատասխանատվության հարցն է արծարծվում Կոնվենցիայի շրջանակներում. միաձայն եզրակացրեց, որ 1999 թվականի հոկտեմբերի 1-ից դեկտեմբերի 11-ը դիմումատուի կալանավորմանն առնչվող Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա բերված բողոքը ժամկետանց է. միաձայն եզրակացրեց, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա 1999 թվականի դեկտեմբերի 11-ից 2001 թվականի հունվարի 29-ը դիմումատուի կալանավորման մասին ներկայացված բողոքը դուրս է այն հարցերի շրջանակից, որոնց հղում է կատարվել քննության համար. միաձայն եզրակացրեց, որ սկսած 2001 թվականի հունվարի 29-ից դիմումատուին կամայականորեն ազատազրկել են՝ դրանով իսկ խախտելով Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասը. միաձայն եզրակացրեց, որ դիմումատուի կալանավայրի հարցի առանձին քննության անհրաժեշտություն ըստ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի չկա. միաձայն եզրակացրեց, որ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի հիմքերով ներկայացված բողոքը դուրս է իր քննության շրջանակներից. տասնչորս ձայնով ընդդեմ երեքի եզրակացրեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, քանի որ 2001 թվականի հունվարի 29-ի վճիռն ի կատար չի անվել. տասնչորս ձայնով ընդդեմ երեքի եզրակացրեց, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ մասով 2001 թվականի հունվարի 29-ի վճիռը չկատարելու կապակցությամբ ներկայացրած բողոքի առանձին քննության անհրաժեշտություն չկա. միաձայն եզրակացրեց, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի մասով 2001 թվականի

հունվարի 29-ի վճիռը չկատարելու կապակցությամբ ներկայացրած բողոքի առանձին քննության անհրաժեշտություն չկա. միաձայն եզրակացրեց, որ 5-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա ներկայացված բողոքը ժամկետանց է. միաձայն եզրակացրեց, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել. միաձայն եզրակացրեց, որ բողոքը Կոնվենցիայի 4-րդ Արձանագրության 2-րդ հոդվածի մասով քննելու անհրաժեշտություն չկա:

Համաձայն Կոնվենցիայի 41-րդ հոդվածի՝ Մեծ Պալատը միաձայն որոշեց, որ պատասխանող Պետությունը պետք է ապահովի դիմումատուի ազատ արձակումը հնարավորինս սեղմ ժամկետներում և արդարացի փոխհատուցում տրամադրի վերջինիս:

#### **(6) Azinas v. Cyprus (Ազինասն ընդդեմ Կիպրոսի), no. 56679/00**

Դիմումատուն, սկսած այն պահից, երբ 1960 թվականին ստեղծվեց Կիպրոսի Հանրապետությունը, աշխատել է Նիկոսիայի հանրային ծառայությունում՝ որպես Համագործակցված զարգացման դեպարտամենտի ղեկավար: 1982 թվականի հուլիսի 28-ին Հանրային ծառայության հանձնաժողովը կարգապահական վարույթ է հարուցում նրա դեմ և նրան պաշտոնից ազատելու որոշում կայացնում այն պատճառաբանությամբ, որ 1981 թվականի ապրիլի 8-ին նա Նիկոսիայի շրջանային դատարանի կողմից մեղավոր է ճանաչվել գողության, վստահության կորստի և իշխանության չարաշահման մեջ: Նա դատապարտվել է 18 ամիս ազատազրկման: Ինչպես մեղավոր ճանաչվելու, այնպես էլ դատավճռի դեմ ուղղված՝ դիմումատուի բողոքը մերժվել է Գերագույն դատարանի կողմից 1981 թվականի հոկտեմբերի 16-ին: Հանրային ծառայության հանձնաժողովը որոշել է, որ դիմումատուն այնպես է վարել դեպարտամենտի գործերը, որ կարծես թե դրա ռեսուրսներն իր անձնական սեփականությունն էին: Պաշտոնից ազատման մասին կարգապահական վճռի հետևանքով դիմումատուն զրկվում է նաև իր պաշտոնաթողության նպաստներից՝ ներառյալ նաև թոշակը: Նա բողոքարկում է՝ առանց հաջողության:

Դիմումատուն մասնավորապես պնդում է, որ Հանրային ծառայությունից ազատելով և իրեն այնուհետև թոշակի իրավունքներից զրկելով խախտվել է 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը: 2001 թվականի հունիսի 19-ին զանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչվեց: 2002 թվականի հունիսի 20-ի Պալատի իր վճռով՝ Դատարանը, վեց ձայնով ընդդեմ մեկի, որոշեց, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում և որ 41-րդ հոդվածի կիրառելիության հարցը որոշման համար պատրաստ չէ:

2002 թվականի սեպտեմբերի 13-ին Կիպրոսի կառավարությունը խնդրեց, որպեսզի գործը ուղարկվի Մեծ պալատ և 2002 թվականի նոյեմբերի 6-ին Մեծ պալատի հանձնախումբն ընդունեց խնդրանքը: Լուումներն անցկացվեցին 2003 թվականի հունիսի 4-ին:

2004 թվականի ապրիլի 28-ին կայացրած իր վճռում Մեծ պալատը տասներկու ձայնով ընդդեմ հինգի որոշեց, որ զանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի հիմքերով ընդունելի չէ, քանի որ դիմումատուն իր բողոքների առնչությամբ չի սպառել ներպետական իրավական պաշտպանության միջոցները:

#### **(7) Broniowski v. Poland (Բրոնիովսկին ընդդեմ Լեհաստանի), no. 31443/96**

Դիմումատուն պնդում է, որ չի բավարարվել Լվովում (այժմ Լվիվ, Ուկրաինա) գտնվող սեփականության (տուն և հողակտոր) համար փոխհատուցում ստանալու իր իրավունքը: Այդ սեփականությունը պատկանել է իր տատին այն ժամանակ, երբ տարածքը Երկրորդ Համաշխարհային պատերազմից առաջ Լեհաստանի մաս էր

հանդիսանում: Այդ իրավունքը սկզբում կտակվել է դիմումատուի մորը, իսկ 1989 թվականին վերջինիս մահից հետո՝ դիմումատուին:

Դիմումատուի տատը, որը շատ այլ անձանց հետ միասին բնակվել է նախապատերազմյան Լեհաստանի արևելյան պրովինցիաներում (որոնք ներառել են այժմյան Բելոռուսի, Ուկրաինայի շատ տարածքներ և Վիլնյուսի շուրջն ընկած այն տարածությունները, որոնք այսօր կազմում են Լիտվայի տարածքը) հայրենադարձել է այն բանից հետո, ինչ Լեհաստանի արևելյան սահմանը վերագծվել էր Բազ գետի երկայնքով (որի կենտրոնական հոսանքը կազմել է Կուրզոնի գծի մասը)՝ Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո: Տարածքը հայտնի է որպես «Սահմանամերձ տարածքներ» (“Kresy”), ինչպես նաև «Բազ գետից անդին ընկած տարածքներ» (“ziemie zabuzanski”):

Լեհաստանի ազգային ազատագրման հանձնաժողովի և նախկին Խորհրդային հանրապետությունների՝ Լիտվայի, Բելորուսի և Ուկրաինայի կառավարությունների հետ այսպես կոչված «հանրապետական համաձայնագրերի» համաձայն՝ Լեհաստանը հանձն առավ փոխհատուցել այն անձանց ովքեր հայրենադարձել են «Բազ գետից անդին ընկած տարածքներից» և ստիպված են եղել լքել իրենց ունեցվածքը: 1944-ից 1953 թթ. ընկած ժամանակահատվածում հանրապետական համաձայնագրերի դրույթների շրջանակներում «հայրենադարձների» թիվը կազմել է 1,240,000 մարդ:

Սկսած 1946 թվականից, Լեհաստանի օրենսդրությունը նման հանգամանքներում հայրենադարձներին վերապահել է կորցրած սեփականության փոխհատուցման իրավունք. նրանց իրավունք է վերապահվել հող գնել պետությունից և լքյալ սեփականության արժեքի համար վճարել այդ հողի այսպես կոչված «շարունակական օգտագործման» արժեքով կամ էլ փոխհատուցվող սեփականության կամ հողի արժեքով:

Այնուամենայնիվ, 1990 թվականի մայիսի 10-ի Տեղական կառավարման մասին ակտի, ինչպես նաև Բազ գետի պահանջատերերի համար նախատեսված գույքի չափը կրճատող մի շարք այլ օրենքների (որոնք մասնավորապես բացառում էին պետության գյուղատնտեսական և ռազմական ունեցվածքի հաշվին վերջիններիս պահանջների բավարարումը) ուժի մեջ մտնելով Պետական Գանձապետարանը ի վիճակի չի եղել կատարելու փոխհատուցում տրամադրելու իր պարտավորությունները, որովհետև այդ պահանջները բավարարելու համար ունեցած հողը բավարար չի եղել: Ի լրումն՝ Բազ գետի պահանջատերերը հաճախակի դուրս են մնացել պետական ունեցվածքի աճուրդներից կամ էլ նրանց մասնակցության համար սահմանվել են մի շարք նախապայմաններ:

Ըստ կառավարության՝ իրավունք ունեցող անձանց մոտավոր թիվը 80,000 է:

Դիմումատուի՝ իր տատի կողմից լքված ունեցվածքի փոխհատուցման իրավունքը նախնականորեն (1980-ական թթ.) գնահատվել է 1,949,560 հին լեհական զլոտի: Լեհական կառավարության կողմից կազմված փորձագիտական զեկույցի համաձայն՝ դիմումատուի իրավունքի արժեքը ներկայումս կազմում է 390,000 նոր լեհական զլոտի: Նրան վճարվել է այդ գումարի (այսինքն նրան հասանելիք փոխհատուցման) մոտ 2 տոկոսը՝ 1981 թ. իր մոր կողմից պետությունից գնված փոքր շինարարական տեղամասի մշտական օգտագործման իրավունքի տեսքով:

2002 թվականի դեկտեմբերի 19-ին Լեհաստանի սահմանադրական դատարանը եզրակացրեց, որ այն դրույթները որոնք բացառում են Բազ գետի պահանջատերերի իրավունքները պետության գյուղատնտեսական և ռազմական գույքի հաշվին բավարարելը, հակասահմանադրական են: Այնուամենայնիվ, այդ վճռից հետո պետության գյուղատնտեսական և ռազմական գույքը կառավարող պետական գործակալությունները կասեցրեցին բոլոր տեսակի աճուրդները՝ հայտարարելով, որ վճռի իրականացման համար անհրաժեշտ է ընդունել լրացուցիչ օրենսդրություն:

2004 թվականի հունվարի 30-ին, երբ ուժի մեջ մտավ 2003 թվականի դեկտեմբերի 12-ի օրենքը, Լեհաստանի պետության պարտավորությունները դիմումատուի, ինչպես նաև նախկին օրենսդրության համաձայն պետությունից որպես փոխհատուցում ինչ-որ գույք ստացած՝ Բագ գետի մնացած բոլոր պահանջատերերի հանդեպ համարվեցին կատարված: Այն պահանջատերերը, ովքեր երբևէ նման փոխհատուցում չէին ստացել, ստացան իրենց սկզբնական իրավունքի 15 տոկոսը՝ առավելագույնս 50,000 Լեհական զլոտի առաստաղով:

Դիմումատուն բողոքում է, որ չի ստացել փոխհատուցման ենթակա այն գույքը, որի իրավունքն ուներ: Այնուհետև նա պնդում է, որ Լեհական պետությունը չի արձագանքել և իրավական ճանապարհով լուծել Բագ գետի պահանջատերերի համար նախատեսված գույքի պակասի հետ կապված խնդիրը, ինչպես նաև որ պետությունն ընդունել է այնպիսի օրենքներ, որոնք պարզապես ի չիք են դարձրել պետական գույք ձեռք բերելու հնարավորությունը: Նա նաև պնդում է, որ իշխանություններն անհնարին են դարձրել իր իրավունքի իրականացումը, քանի որ համատարած կերպով պետական հողը վաճառքի չեն դրել և դրանով իսկ թույլ չեն տվել փոխհատուցման դիմաց նախատեսված գույքի իրավունք ունեցող մարդկանց մրցել աճուրդների ժամանակ: Նա վկայակոչում է Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը:

2002 թվականի մարտի 26-ին Ղատարանի՝ գործը քննող Պալատը զիջեց ընդդատությունը Մեծ պալատին:

2004 թվականի հունիսի 22-ին կայացրած իր վճռում (միաձայն) Մեծ պալատը եզրակացրեց, որ խախտվել է Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածը: Մեծ պալատն այնուհետև վճռեց, որ խախտումը շարունակական բնույթ ունեցող խնդրի արդյունք է, որը կապված է ներքին օրենսդրության և պրակտիկայի թերացումների հետ, որն առաջացել է Բագ գետի պահանջատերերին իրենց “վարկի իրավունքը” իրականացնելու համար անհրաժեշտ արդյունավետ մեխանիզմներ չստեղծելու պատճառով: Այդ պատճառով Մեծ պալատը գտավ, որ պատասխանող պետությունը պետք է համապատասխան իրավական միջոցներով և վարչական ընթացակարգերով ապահովի խնդրո առարկա սեփականության իրավունքի իրականացումը Բագ գետի մնացած պահանջատերերի հանդեպ կամ դրա փոխարեն վերջիններիս տրամադրի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող սեփականության պաշտպանության սկզբունքներին համապատասխան փոխհատուցում: Մեծ Պալատը հետաձգեց Կոնվենցիայի 41-րդ հոդվածի մասով քննությունը:

**(8) Ilaskwu and others v. Moldova and Russia (Իլասկուն և այլք ընդդեմ Մոլդավիայի և Ռուսաստանի), no. 48787/99**

Դիմումատուները՝ Իլի Իլասկուն, Ալեքսանդրու Լեսկոն, Անդրեյ Իվանտոկը և Տյուդոր Պետրով-Պոպան, որոնք զանգատի ներկայացման ժամանակ Մոլդովայի քաղաքացիներ էին ծնվել են համապատասխանաբար 1952, 1955, 1961 և 1963 թվականներին: Պրն. Իլասկուն ձեռք է բերել Ռումինիայի քաղաքացիություն 2000 թվականին. նույնն են արել նաև պրն. Լեսկոն և պրն. Իվանտոկը 2001 թվականին: Բացառությամբ Պրն. Իլասկուի և պրն. Լեսկոյի, որոնք ազատ են արձակվել 2001 թվականի մայիսին և 2004 թվականի հունիսին, դիմումատուները ներկայումս կալանքի տակ են գտնվում «Տրանսդնիեստրիա Մոլդավական Հանրապետությունում» (ՏՄՀ), Մոլդովայի Տրանսդնիեստրիա շրջանում, որն իր անկախությունը հռչակել է 1991 թվականին:

Գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ պրն. Իլասկուն ժողովրդական ճակատի տեղական առաջնորդն էր և աշխատում էր Մոլդովայի և Ռումինիայի միավորման ուղղությամբ: Նա երկու անգամ ընտրվել էր Մոլդավայի

խորհրդարան և նշանակվել է վրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի Մոլդովայի պատվիրակության անդամ: 2000 թվականի դեկտեմբերին նա ընտրվել է Ռումինական խորհրդարանի Սենատ և նշանակվել որպես խորհրդարանական վեհաժողովի Ռումինիայի պատվիրակության անդամ:

1992 թվականի հունիսի 2-ից 4-ը դիմումատուներին Տիրասպոլի իրենց տներում ձեռք բերելու են մի խումբ մարդիկ, որոնցից մի քանիսը կրում էին համազգեստներ, որոնց վրա կարելի էր տեսնել նախկին ԽՍՀՄ-ի Տասնչորսերորդ բանակի նշանը: Նրանց մեղադրել են Ռումինիայի և Մոլդովայի ժողովրդական ճակատի ղեկավարությամբ հակախորհրդային գործունեության և Տրանսդնիեստրիայի պետության օրինական կառավարության դեմ անօրինական պայքար ծավալելու մեջ: Նրանց նաև մեղադրել են մի շարք հանցագործությունների՝ ներառյալ նաև երկու սպանությունների, կատարման մեջ: 1993 թվականի դեկտեմբերի 9-ին ՏՄՀ-ի Գերագույն դատարանը պրն. Իլասկուլին մահապատժի դատապարտեց և վերջինիս գույքը բռնագրավելու մասին որոշում կայացրեց: Սյուս դիմումատուներին այդ նույն դատարանը դատապարտեց 12-ից 15 տարի ազատազրկման և նրանց գույքը բռնագրավելու մասին ևս որոշում կայացվեց:

Դիմումատուները բողոքում են, որ խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը այն հիմքերով, որ նրանց դատապարտած դատարանը չի ունեցել համապատասխան իրավագործությունը և որ ամեն դեպքում իրենց մեղավոր ճանաչվելուն հանգեցրած դատավարությունն արդարացի չի եղել: Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի հիմքերով նրանք նաև բողոքում են իրենց գույքի բռնագրավման դեմ և պնդում, որ իրենց կալանավորումն անօրինական է եղել և հակասում է 5-րդ հոդվածին: Պրն. Իլասկուլին այնուհետև, իրեն մահապատժի դատապարտելու առնչությամբ բողոքում էր 2-րդ հոդվածի խախտման մասին: Բացի այդ, բոլոր դիմումատուները բողոքում են իրենց կալանքի պայմանների դեմ՝ ուղղակիորեն վկայակոչելով 3-րդ և 8-րդ հոդվածները, իսկ նյութական առումով՝ 34-րդ հոդվածը: Նրան պնդում են, որ հիշյալ խախտումների մեջ մեղավոր են Մոլդովայի իշխանությունները, քանի որ վերջիններս համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել դրանց վերջակետ դնելու համար: Նրանց պնդումների համաձայն՝ Ռուսաստանի Դաշնությունը կիսում է այդ պատասխանատվությունը, քանի որ Տրանսդնիեստրիայի տարածքը Ռուսաստանի de facto հսկողության տակ է, քանի որ այնտեղ տեղեկայված են վերջինիս զորքերը և ռազմական սարքավորումները, ինչպես նաև այն, որ պետությունն օգնել է անջատողականներին:

2001 թվականի մարտի 20-ին Դատարանի՝ գործը քննող Պալատը զիջեց ընդդատությունը հօգուտ Մեծ պալատի: Մեծ պալատը որոշեց լսումներ անցկացնել գանգատի ընդունելիության և գործի էության վերաբերյալ և Նախագահը հրավիրեց Ռումինիայի կառավարությանը մասնակցել լսումներին: 2001 թվականի հուլիսի 4-ի որոշմամբ գանգատը մասնակիորեն ընդունելի ճանաչվեց այն բանից հետո, ինչ 2001 թվականի հունիսի 6-ին անցկացվեցին լսումներ: Դատարանի պատվիրակությունը 2003 թվականի մարտի 10-ին 15-ն ընկած ժամանակահավաստում տեղում քննություն իրականացրեց Չիզինաուում և Տիրասպոլում:

Իր 2004 թվականի հուլիսի 8-ին կայացրած վճռում Մեծ Պալատը տասնմեկ ձայնով ընդդեմ վեցի եզրակացրեց, որ դիմումատուները Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով գտնվում են Մոլդովայի Հանրապետության իրավագործության ներքո, որքանով որ խոսքը վերաբերում է պետության դրական պարտավորություններին. տասնվեց ձայնով ընդդեմ մեկի եզրակացրեց, որ դիմումատուները Կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով գտնվում են Ռուսաստանի Դաշնության իրավագործության ներքո, որ Դատարանը իրավագոր չէ *ratione temporis* քննության առնելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմքերով ներկայացված բողոքը, տասնվեց ձայնով ընդդեմ մեկի որ Դատարանն *ratione temporis* իրավասություն չունի քննության առնելու Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 8-րդ հոդվածների մասով ներկայացված բողոքները այնքանով,

որքանով դրանք վերաբերում են Մոլդովայի Հանրապետության պարագայում 1997 թվականի սեպտեմբերի 12-ից հետո ընկած իրադարձություններին, իսկ Ռուսաստանի Դաշնության պարագայում 1998 թվականի մայիսի 5-ից հետո ընկած իրադարձություններին. տասնհինգ ձայնով ընդդեմ երկուսի եզրակացրեց, որ Դատարանից չէր պահանջվում որոշել, թե արդյոք այն ուներ *ratione temporis* իրավագործություն բողոքը Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի մասով քննելու, թե ոչ. միաձայն եզրակացրեց, որ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտման մասին բողոքն այն փաստի կապակցությամբ, որ պրն. Իլասկուն դատապարտվել էր մահապատժի ՏՄՀ-ի Գերագույն դատարանի կողմից առանձին քննության անհրաժեշտություն չի առաջացնում. տասնմեկ ձայնով ընդդեմ վեցի եզրակացրեց, որ Մոլդովայի կողմից Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել պրն. Իլասկուի հանդեպ ցուցաբերված վատ վերաբերմունքի կապակցությամբ, ինչպես նաև այն պայմանների կապակցությամբ որում նա կալանքի էր ենթարկվել՝ սպասելով պատժի կատարմանը, և որ դա պետք է համարել խոշտանգում այդ դրույթի նշանակությունից ելնելով. տասնմեկ ձայնով ընդդեմ վեցի եզրակացրեց, որ 2001 թվականի մայիսից ի վեր Մոլդովայի կողմից տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում պրն. Իվանտոկի հանդեպ ցուցաբերած անմարդկային վերաբերմունքի և այն պայմանների կապակցությամբ, որում նա կալանքի էր ենթարկվել և որ դա պետք է համարել խոշտանգում այդ դրույթի նշանակությունից ելնելով, տասնվեց ձայնով ընդդեմ մեկի եզրակացրեց, որ Ռուսաստանի Դաշնության կողմից թույլ է տրվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում պրն. Իվանտոկի հանդեպ ցուցաբերած անմարդկային վերաբերմունքի, ինչպես նաև այն պայմանների կապակցությամբ, որում նա կալանքի տակ էր պահվել և որ դա պետք է համարել խոշտանգում այդ դրույթի նշանակությունից ելնելով, տասնմեկ ձայնով ընդդեմ վեցի եզրակացրեց, որ Մոլդովայի կողմից 2001 թվականի մայիսից ի վեր թույլ է տրվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում պրն. Լեսկոյի և պրն. Պետրով-Պոպայի հանդեպ ցուցաբերած անմարդկային վերաբերմունքի, ինչպես նաև նրա կալանքի պայմանների կապակցությամբ և որ դա պետք է համարել անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողություն այդ դրույթի նշանակությունից ելնելով, տասնվեց ձայնով ընդդեմ մեկի եզրակացրեց, որ Ռուսաստանի Դաշնության կողմից թույլ է տրվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում պրն. Լեսկոյի և պրն. Պետրով-Պոպայի հանդեպ ցուցաբերած անմարդկային վերաբերմունքի, ինչպես նաև նրանց կալանքի պայմանների կապակցությամբ և որ դա պետք է համարել անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողություն այդ դրույթի նշանակությունից ելնելով, տասնմեկ ձայնով ընդդեմ վեցի եզրակացրեց, որ Մոլդովայի կողմից թույլ է տրվել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում պրն. Իլասկույի կալանավորման կապակցությամբ, տասնմեկ ձայնով ընդդեմ վեցի եզրակացրեց, որ Մոլդովայի կողմից թույլ է տրվել և թույլ է տրվում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում 2001 թվականի մայիսից հետո պրն. Իվանտոկի, պրն. Լեսկոյի և պրն. Պետրով-Պոպայի կալանավորման կապակցությամբ, տասնվեց ձայնով ընդդեմ մեկի եզրակացրեց, որ Ռուսաստանի Դաշնության կողմից թույլ է տրվել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի խախտում պրն. Իլասկուի հանդեպ մինչև 2001 թվականի մայիս ամիսը, և որ թույլ է տրվել և տրվում այդ դրույթի խախտում պրն. Իվանտոկի, պրն. Լեսկոյի և պրն. Պետրով-Պոպայի հանդեպ, միաձայն եզրակացրեց, որ դիմումատուների բողոքը Կոնվենցիայի 8-րդ հոդվածի մասով առանձին քննության առնելու հիմք չկա, տասնհինգ ձայնով ընդդեմ երկուսի եզրակացրեց, որ Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում թույլ չի տրվել, տասնվեց ձայնով ընդդեմ մեկի եզրակացրեց, որ Մոլդովան չի կատարել Կոնվենցիայի 34-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունները, տասնվեց

ձայնով ընդդեմ մեկի եզրակացրեց, որ Ռուսաստանի Դաշնությունը չի կատարել Կոնվենցիայի 34-րդ հոդվածով ստանձնած իր պարտավորությունները:

Մեծ պալատը նաև տաս ձայնով ընդդեմ յոթի եզրակացրեց, որ Մոլդովիան պետք է դիմումատուներին փոխհատուցում վճարի նյութական և ոչ նյութական վնասի համար և տասնվեց ձայնով ընդդեմ մեկի եզրակացրեց, որ Ռուսաստանի Դաշնությունը պետք է փոխհատուցում վճարի դիմումատուներին: Այն այնուհետև միաձայն եզրակացրեց, որ պատասխան պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ վերջ տալու դիմումատուների կամայական կալանքին, որոնք դեռևս բանտում են և ապահովեն նրանց անհապաղ ազատ արձակումը:

### **(9) Vo v. France (Վոն ընդդեմ Ֆրանսիայի), no. 53924/00**

1991 թվականի նոյեմբերի 27-ին դիմումատուն հաճախել է Լիոնսի գլխավոր հիվանդանոցը բժշկական քննության համար, որը նախատեսված էր հղիության վեցերորդ ամսվա ընթացքում: Այդ նույն օրը մեկ այլ կին՝ տկն. Թի Թանի Վան Վոն պետք է պարույր հեռացներ այդ նույն հիվանդանոցում:

Այն փաստի պատճառով, որ երկու կանայք էլ ունեին միևնույն ազգանունը, բժիշկը թյուրիմացաբար ծակում է դիմումատուի ամնիոտիկ պարկը, ինչը թերապևտիկ արթուրի անհրաժեշտություն է առաջացնում:

1991 թվականին դիմումատուի և իր ամուսնու կողմից ներկայացված քրեական բողոքի համաձայն՝ բժիշկը մեղադրվում է անզգուշությամբ վնասվածք պատճառելու մեջ, իսկ այնուհետև մեղադրանքը վերորակավորվում է անզգուշ սպանության: 1996 թվականի հունիսի 3-ին Լիոնսի Քրեական դատարանը արդարացնում է բժշկին: Դիմումատուն բողոքարկում է և 1997 թվականի մարտի 13-ին Լիոնսի Վերաքննիչ դատարանը բեկանում է համարում Քրեական դատարանի դատավճիռը, բժշկին մեղավոր ճանաչում անզգուշ սպանության մեջ և նրան դատապարտում վեց ամսվա ազատազրկման ու նշանակում 10,000 ֆրանսիական ֆրանկ տուգանք: 1999 թվականի հունիսի 30-ին Վճռաբեկ դատարանը բեկանում է Վերաքննիչ դատարանի դատավճիռը՝ հայտարարելով, որ գործի առնչությամբ առկա փաստերը չեն կազմում անզգուշ սպանության հանցակազմ. այսպիսով՝ դատարանը մերժում է պտուղը դիտել որպես մարդ արարած, որը ենթակա է քրեական օրենքի պաշտպանությանը:

Վկայակոչելով Կոնվենցիայի 2-րդ հոդվածը՝ դիմումատուն բողոքարկում է այն հարցը, որ իշխանությունները մերժել են իր չճանաչված երեխայի ոչ միտումնավոր սպանությունը որակել որպես անզգուշ սպանություն: Նա պնդում է որ Ֆրանսիան պարտավոր է օրենսդրություն ընդունել, որը նման արարքները կքրեականացնի:

2003 թվականի մայիսի 22-ին Պալատը զիջեց ընդդատությունը հօգուտ Մեծ պալատի: Լուսններն անցկացվեցին 2003 թվականի դեկտեմբերի 10-ին:

2004 թվականի հուլիսի 8-ին կայացրած իր վճռում Մեծ պալատը միաձայն հռչակեց, որ զանգատն ընդունելի է և տասնչորս ձայնով ընդդեմ երկուսի որոշեց, որ ընդունելիությամբ հանդերձ Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում թույլ չի տրվել:

### **(10) Kopeccky v. Slovakia (Կոպեցկին ընդդեմ Սլովակիայի), no. 44912/98**

1959 թվականի փետրվարի 12-ին դիմումատուի հորը տուգանել են և դատապարտել մեկ տարի ազատազրկման դրամագիտական արժեք ներկայացնող 131 ոսկյա մետաղադրամներ և 2,151 արծաթյա մետաղադրամներ պահելու համար: Մետաղադրամները նաև բռնագրավվել են:

1992 թվականի ապրիլի 1-ին դատավճիռը բեկանվել է և 1992 թվականի սեպտեմբերի 30-ին դիմումատուն պահանջել է ետ վերադարձնել իր հոր

մետաղադրամները՝ համաձայն Արտադատական ռեաբիլիտացիայի 1991 թվականի ակտի (1991 թ. ակտ):

1995 թվականի սեպտեմբերի 15-ին Սենիցայի շրջանային դատարանը եզրակացրեց, որ դիմումատուին չի կարող կատարել 1991 թվականի ակտի պայմանը և ցույց տալ, թե որտեղ է եղել խնդրո առարկա շարժական գույքը 1991 թ. ապրիլի 1-ին, երբ ուժի մեջ է մտել տվյալ ակտը: Դատարանը կարգադրեց Ներքին գործերի նախարարությանը վերադարձնել մետաղադրամները դիմումատուին:

Սակայն Ներքին գործերի նախարարությունը բողոքարկել է՝ փաստարկելով, որ բոլոր առնչվող փաստաթղթերը ոչնչացվել են և որ մետաղադրամների տեղի հարցը ապացուցելու բեռը դիմումատուի վրա է դրված:

1997 թվականի հունվարի 29-ին Բրատիսլավայի շրջանային դատարանը մերժել է դիմումատուի պահանջը՝ գտնելով, որ վերջինս չի կարողացել կատարել գույքի գտնվելու կոնկրետ վայրը մատնանշելու՝ 1991 թվականի ակտով սահմանված պարտավորությունը: Գերագույն դատարանը անփոփոխ թողեց այս որոշումը: Երկու դատարաններն էլ որոշել են, որ ներկայացված ապացույցները բավարար չեն, որ հաստատեն, որ 1991 թվականին Ներքին գործերի նախարարությունը դեռևս տիրապետում էր բռնագրավված մետաղադրամներին:

Դիմումատուին մասնավորապես բողոքում է, որ մետաղադրամները վերադարձնելու իր պահանջի մերժումը Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում է:

2003 թվականի հունվարի 7-ի իր վճռում Դատարանի Պալատը չորս ձայնով ընդդեմ երեքի որոշեց, որ առկա է 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

2003 թվականի ապրիլի 4-ին Սլովակիայի կառավարությունը խնդրեց որ գործը ուղարկվի Մեծ պալատ և 2003 թվականի մայիսի 21-ին Մեծ պալատի Յանձնախումբն ընդունեց խնդրանքը: Լսումները կազմակերպվեցին 2004 թվականի ապրիլի 7-ին:

2004 թվականի սեպտեմբերի 28-ի իր վճռում Մեծ պալատը տասներեք ձայնով ընդդեմ երեքի որոշեց, որ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում առկա չէ:

**(11) Edwards and Lewis v. the United Kingdom (Էդվարդզ և Լյուիսն ընդդեմ Միացյալ Թագավորության), nos. 39647/98 and 40461/98**

Առաջին դիմումատուին մեղավոր է ճանաչվել թմրադեղերի հետ կապված հանցագործությունների կատարման մեջ ոստիկանության գաղտնի ծառայողի ընկերակցությամբ ձերբակալվելուց հետո: Քանի որ դիմումատուին միակ անձն է եղել, ով մեղավոր է ճանաչվել հանցագործության կատարման մեջ, նա կասկածում է, որ մնացած մասնակիցները նույնպես գաղտնի գործակալներ կամ ինֆորմատորներ են եղել, ովքեր գործել են ոստիկանության հրահանգների համաձայն: Իր դատավարությունից առաջ մեղադրող կողմը պաշտպանությանը ծանուցում է հղում առ այն որ *ex parte* դիմում է ներկայացվել վկայությունը ետ վերցնելու վերաբերյալ: Պաշտպանության բացակայությամբ նյութը քննող դատավորը եզրակացրեց, որ վկայությունը չի օգնի պաշտպանությանը և որ կային իրական հանրային շահերով պայմանավորված հիմքեր այն ետ վերցնելու համար: Այս կարգադրությունը պաշտպանող կողմի անունից ներկայացրած նկատառումները լսելուց հետո հաստատեց նաև դատը վարող դատավորը: Դատը վարող դատավորը մերժեց նաև գաղտնի գործակալի վկայությունը հաշվի չառնելու մասին խնդրանքն այն հիմքով, որ դիմումատուին զգել են հանցագործությունը կատարելու ծուղակը: Իրեն մեղավոր ճանաչելու դեմ դիմումատուի՝ Վերաքննիչ դատարան ներկայացրած բողոքը մերժվում է չբացահայտված նյութը քննող Վերաքննիչ դատարանի կողմից:

Երկրորդ դիմումատուին, որին մեղավոր են ճանաչում կեղծ թղթադրամներ թողարկելու մեջ, նույնպես պնդում է, որ իրեն ծուղակն են զգել ոստիկանության

գաղտնի ծառայողները կամ ինֆորմատորները: Դատավորը, լսելով մեղադրող կողմի ապացույցները հանրային շահերի նկատառումներից ելնելով ex parte դիմումը չիրապարակելու մասին, կարգադրում է չբացահայտել դրանք: Նա նաև մերժում է ոստիկանության գաղտնի գործակալների ապացույցները հաշվի չառնելու մասին խնդրանքը: Արդյունքում՝ դիմումատուին մեղավոր են ճանաչում:

Դիմումատուները Կոնվենցիայի դատավարական նորմերի հիմքերով պնդում են, որ իրենց զրկել են արդար դատաքննության իրավունքից, ինչը խախտում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ինչը արդյունք է պրովոկատոր գործակալների կողմից իրենց հանցագործության դրդելու փաստի, ինչպես նաև բողոքում են ազգային դատարանների կողմից վկայությունը չիրապարակելու մասին ընթացակարգի դեմ:

Դատարանի Պալատը միաձայն որոշեց, որ թույլ է տրվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

2003 թվականի հոկտեմբերի 21-ին Կառավարությունը դիմեց Դատարան գործը Մեծ պալատ ուղարկելու խնդրանքով: Մեծ պալատի Հանձնախումբն ընդունեց դիմումը 2003 թվականի դեկտեմբերի 3-ին:

2004 թվականի հոկտեմբերի 27-ին կայացրած իր վճռում Մեծ պալատը նշեց, որ Կառավարությունը, որը ներկայացրել էր գործը Մեծ պալատ ուղարկելու մասին դիմումը, հայտնել է, որ այլևս չի ցանկանում հետամուտ լինել այդ հարցին և բավարարված կհամարի իրեն, եթե Մեծ պալատը հաստատի Պալատի վճիռը: Մեծ պալատը՝ Պալատի վճիռից հրաժարվելու պատճառներ չտեսնելու պարագայում միաձայն որոշեց, որ թույլ է տրվել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում:

## (12) Oneryildiz v. Turkey (Օներիլդիզն ընդդեմ Թուրքիայի), no. 48939/99

Դիմումատուն՝ Սաշալա Օներիլդիզը, Թուրքիայի քաղաքացի է՝ ծնված 1955 թվականին: Դեպքը տեղի ունենալու ժամանակ նա ապրում էր իր 12 ազգակիցների հետ Ռեմանիյեի (Ստամբուլ) Կազիմ Կարաբեքիր աղբատիկ թաղամասում:

Կազիմ Կարաբեքիրի տարածքը կիսակառույց վիճակում գտնվող շինությունների ամբողջություն է, որոնք առանց թույլտվության կառուցվել են աղբանոցի շրջակայքում գտնվող հողերի վրա, իսկ աղբանոցը սկսած 1970-ական թթ. համատեղ օգտագործվել է չորս թաղային խորհուրդների կողմից Ստամբուլի քաղաքային խորհրդի ղեկավարությամբ և պատասխանատվությամբ: 1991 թվականի մայիսի 7-ին Ուսկուդար թաղային դատարանի դիմումի համաձայն մշակված փորձագիտական զեկույցը (իսկ գործը դատարան էր ներկայացվել Ումրայինե թաղային խորհրդի կողմից) ի թիվս այլ հարցերի, հրավիրեց իշխանությունների ուշադրությունն այն հարցին, որ որևէ միջոց չի ձեռնարկվում քայքայվող աղբի հետևանքով առաջացած մեթանի պայթյունները կանխարգելելու համար: Ձեկույցը համապատասխան համայնքների ղեկավարների միջև մեծ վիճաբանությունների տեղիք տվեց: Սակայն, նախքան նրանցից յուրաքանչյուրի կողմից հարուցված գործն իր ավարտին կհասցվեր, 1993 թ. ապրիլի 28-ին տեղի ունեցավ մեթանի պայթյուն, և աղբանոցից պոկված թափոնները կլանեցին ներքևում տեղակայված տասից ավելի տները՝ ներառյալ նաև դիմումատուի տունը, ինչի հետևանքով զոհվեցին նրա ինը ազգակիցները:

Այն բանից հետո, ինչ անց կացվեցին գործի քրեական և վարչական քննությունները, Ռեմանիյեի և Ստամբուլի համայնքների ղեկավարները ստիպված եղան կանգնել դատարանի առջև՝ առաջինը՝ աղբանոցը շրջապատող հյուղակները ոչնչացնելու իր պարտավորությունը չկատարելու, իսկ երկրորդը աղբանոցը կարգի հրավիրելու կամ փակելու իր պարտավորությունը չկատարելու համար՝ ի հեճուկս 1991 թվականի մայիսի 7-ի փորձագիտական զեկույցի առաջարկությունների: 1996 թվականի ապրիլի 4-ին հիշյալ երկու համայնքների ղեկավարները մեղավոր ճանաչվեցին «իրենց պարտավորությունների կատարման հարցում անփութություն»

ցուցաբերելու համար, երկուսի հանդեպ էլ 160,000 թուրքական լիրա (TRL) տուգանք նշանակվեց և երկուսն էլ դատապարտվեցին առնվազն երեք ամիս ազատազրկման՝ համաձայն Քրեական օրենսգրքի 230 հոդվածի: Նրանց պատիժն այնուհետև փոխարինվեց տուգանքով, որի վճարումը կասեցվել է:

Դիմումատուն այնուհետև իր և իր երեք ողջ մնացած երեք երեխաների անունից Ստամբուլի Վարչական դատարանում գործ հարուցեց կրած վնասի փոխհատուցման համար՝ մեղադրելով իշխանություններին իր ազգակիցների մահվան և իր գույքի կորստի մեջ: 1995 թվականի նոյեմբերի 30-ին կայացրած իրենց վճռում իշխանություններին հանձնարարվեց դիմումատուին և նրա երեխաներին վճարել 100,000,000 թուրքական լիրա ոչ նյութական վնասի համար և 10,000,000 լիրա տնային գույքի ոչնչացման հետ կապված նյութական վնասի դիմաց (այդ ժամանակ գումարը հավասար էր մոտ 2,077 և 208 եվրոյի համապատասխանաբար): Այդ գումարները դեռևս չեն վճարվել դիմումատուին և նա վճռի հարկադիր կատարման համար գործ չի հարուցել:

Հիմնվելով Կոնվենցիայի 2-րդ, 8-րդ և 13-րդ հոդվածների, ինչպես նաև 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի վրա՝ դիմումատուն պնդում է, որ ներպետական իշխանությունները պատասխանատու են 1993 թվականի ապրիլի 28-ին Ունրայիների (Ստամբուլ) աղբանոցում տեղի ունեցած մեթանի պայթյան հետևանքով իր ազգակիցների մահվան և իր գույքի կորստի համար: Նա այնուհետև բողոքում է, որ իր գործով անցկացված վարչական դատավարությունը չի ընթացել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում ամրագրված արդարացիության և ողջամիտ ժամկետներում գործի քննության պահանջների համաձայն:

2002 թվականի հունիսի 18-ին Դատարանի պալատը, հինգ ձայնով ընդդեմ երկուսի, վճռեց, որ դիմումատուի ազգակիցների մահվան և դատական համակարգի անարդյունավետության կապակցությամբ թույլ է տրվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում և չորս ձայնով ընդդեմ երեքի, որ թույլ է տրվել 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում:

2002 թվականի սեպտեմբերի 12-ին Թուրքիայի կառավարությունը դիմում ներկայացրեց՝ խնդրելով գործն ուղարկել Մեծ պալատ: Մեծ պալատի Հանձնախումբը դիմումն ընդունեց 2002 թվականի նոյեմբերի 6-ին: Լսումներն անցկացվեցին 2003 թվականի մայիսի 7-ին:

2004 թվականի նոյեմբերի 30-ին կայացրած իր վճռում Մեծ պալատը միաձայն որոշեց, որ թույլ է տրվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում դիմումատուի ինը ազգակիցների պատահական մահը կանխելու ուղղությամբ համապատասխան քայլեր չձեռնարկելու կապակցությամբ, տասնվեց ձայնով ընդդեմ մեկի, որ թույլ է տրվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում կյանքի իրավունքը երաշխավորող օրենքով համապատասխան պաշտպանություն չապահովելու կապակցությամբ, տասնհինգ ձայնով ընդդեմ երկուսի, որ թույլ է տրվել Կոնվենցիայի 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի խախտում, տասնհինգ ձայնով ընդդեմ երկուսի, որ 2-րդ հոդվածի մասով թույլ է տրվել 13-րդ հոդվածի խախտում, տասնհինգ ձայնով ընդդեմ երկուսի, որ 1-ին Արձանագրության 1-ին հոդվածի մասով բողոքի առնչությամբ թույլ է տրվել 13-րդ հոդվածի խախտում, միաձայն, որ 6-րդ հոդվածի 1-ին մասի կամ 8-րդ հոդվածի հիմքերով առանձին հարց չի ծագում:

**(13) Cumpăna and Mazare v. Romania (Կումպանան և Մազարեն ընդդեմ Ռումինիայի), no. 33348/96**

Դիմումատուները երկուսն էլ լրագրողներ են: Պրն. Մազարեն Ռումինիայի խորհրդարանի անդամ է և Կոնստանտայի քաղաքապետը: 1994 թվականի ապրիլին նրանք հոդված են հրատարակում «Տելեգրաֆ» թերթում, որի խմբագիրը պրն. Մազարեն է՝ կասկածի տակ դնելով այն համաձայնագրի օրինականությունը, որի

միջոցով Կոնստանտայի քաղաքային խորհուրդը վարձել էր Վ. ընկերությանը անօրինականորեն կանգնեցված մեքենաներն առգրավելու նպատակով: Հոդվածը, որը լույս էր տեսել հետևյալ խորագրով. «Նախկին փոխքաղաքապետ Դ.Մ.-ն և գործող դատավոր Ռ.Մ.-ն կատարել են մի շարք հանցագործություններ Վ.-ի սխեմայում», ուղեկցվել էր, ի թիվս այլ բաների, մի ծաղրանկարով, որտեղ պատկերված էր եղել դատավորը (Ռ.Մ.) նախկին փոխքաղաքապետի թևի վրա թղթադրամներով լի պայուսակ քարշ տալիս:

Ռ.Մ.-ը, որը քաղաքային խորհրդի անունից ստորագրել էր պայմանագիրը Վ.-ի հետ, դատի է տալիս դիմումատուներին: Նա պնդում է, որ ծաղրանկարը ակնարկ է պարունակում առ այն, որ ինքը և փոխքաղաքապետը, որոնք երկուսն էլ անունացած են, ինտիմ հարաբերությունների մեջ են: 1995 թվականի մայիսի 17-ին դիմումատուներին մեղավոր են ճանաչում վիրավորանքներ հասցնելու և զրպարտության համար և դատապարտում 7 ամիս ազատազրկման: Նաև հրաման է արձակվում, որով նրանց արգելում են ազատազրկումից հետո մեկ տարի զբաղվել լրագրողական գործունեությամբ: Բողոքարկման ժամանակ նրանց դարձյալ մեղավոր են ճանաչում:

Հանրային դատախազությունը դիմում է ներկայացնում՝ պահանջելով ի կատար չածել 1995 թվականի մայիսի 17-ի որոշումը: Արդարադատության գերագույն խորհուրդը մերժում է դիմումը՝ հիմնավորելով, որ հոդվածը զրպարտություն էր պարունակում և որ ծաղրանկարի հրատարակումը, որը Ռ.Մ.-ի պատվի և հեղինակության համար կործանարար կարող էր լինել, համարվում է վիրավորանքի հասցնում:

1996 թվականի նոյեմբերի 22-ին Ռումինիայի նախագահը ներում է շնորհում դիմումատուներին՝ ազատ արձակելով նրանց: Պրն. Մազարեն շարունակում է աշխատել որպես «Տելեգրաֆի» խմբագիր, իսկ պրն. Կունպանան թողնում է թերթը, երբ 1997 թվականին կրճատվում են աշխատակիցների հաստիքները:

Կոնվենցիայի վարույթի շրջանակներում դիմումատուները բողոքարկում են, որ հոդվածի հրատարակման համար նրանց մեղավոր ճանաչելը և դատավճիռը խախտել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված արտահայտվելու ազատության իրենց իրավունքը:

2003 թվականի հունիսի 10-ի իր վճռում Դատարանի պալատը, հինգ ձայնով ընդդեմ երկուսի եզրակացրեց, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում թույլ չի տրվել:

2003 թվականի դեկտեմբերի 3-ին Մեծ պալատի հանձնախումբն ընդունեց դիմումատուների՝ գործը Մեծ պալատ ուղարկելու մասին դիմումը: Լսումները տեղի ունեցան 2004 թվականի սեպտեմբերի 1-ին:

2004 թվականի դեկտեմբերի 17-ին կայացրած իր վճռում Մեծ պալատը միաձայն եզրակացրեց, որ թույլ է տրվել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

**(14) Pedersen and Baadsgaard v. Denmark (Պեդերսենը և Բաադսգարդը  
ընդդեմ Դանիայի), no. 49017/99**

Գործի հանգամանքները տեղի ունենալու ժամանակ դիմումատուները «Դանմարկա ռադիոյի» լրագրողներ են եղել: Նրանք պատրաստել են երկու հաղորդում մարդասպանության գործով մի դատավարության մասին, որտեղ մի մարդու դատապարտում են 12 տարի ազատազրկման իր կնոջը սպանելու համար: Հաղորդումները հեռարձակվում են 1990 թվականի սեպտեմբերի 17-ին և 1991 թվականի ապրիլի 22-ին: Հաղորդումներում քննադատության է արժանանում հետաքննությունը վարելու Ֆրեդերիկշեյվենի ոստիկանության գործելակարգը: Երկրորդ հաղորդման ժամանակ պրն. Բաադսգարդը հարցազրույց է վարում վկաներից մեկի՝ տաքսիի մի վարորդի, որի ընթացքում մեկնաբանողը տալիս է մի

քանի հարցեր՝ դրանով իսկ ցույց տալով, թե ինչպես են ոստիկանության ավագ ծառայողները միտումնավոր կերպով ճնշում գործադրել տաքսիի վարորդի ցուցմունքի վրա: Այս կապակցությամբ արծարծվում են քննության համար պատասխանատու Արագ գործողության ոստիկանական բաժանմունքի Գլխավոր սուպերինտենդանտի և գլխավոր տեսուչի անունները և ցույց են տրվում նրանց լուսանկարները:

1991 թվականի մայիսի 23-ին Գլխավոր սուպերինտենդանտը դիմում է ներկայացնում ոստիկանություն, որտեղ մեղադրում է դիմումատուներին և նրանց հեռուստակայանը իրեն վարկաբեկելու մեջ: 1991 թվականի նոյեմբերի 29-ին Հատուկ վճռաբեկ դատարանը որոշում է վերստին քննել մարդասպանության գործը: Այդ ընթացքում, հեռուստահաղորդումների հետևանքով հետաքննություն է սկսվում՝ պարզելու, թե ինչպես է անցկացվել ոստիկանական քննությունը: 1991 թվականի դեկտեմբերին 20-ին կայացրած եզրակացության մեջ ասվում է, որ այն չի համապատասխանել վկաներին՝ իրենց ցուցմունքը տալու հնարավորությունների կապակցությամբ նախատեսված օրենսդրական պահանջներին: 1992 թվականին ապրիլի 13-ին մարդասպանության գործով դատվող մեղադրյալին արդարացնում են:

Լրագրողներին պաշտոնապես զրպարտության մեղադրանք ներկայացվեց 1993 թվականի հունվարի 19-ին: 1995 թվականի սեպտեմբերի 15-ին Քաղաքային դատարանը նրանց մեղավոր է ճանաչում, սակայն պատիժ չի նշանակում: Բողոքարկում են ինչպես լրագրողները, այնպես էլ՝ մեղադրող կողմը: 1997 թվականի մարտի 6-ին Վերին դատարանը վերահաստատում է նրանց դատավճիռը և նշանակում 400 դանիական կրոն 20-օրյա տուգանք (մոտավորապես 53 եվրո) և կարգադրում, որ նրանք Գլխավոր սուպերինտենդանտին որպես հատուցում վճարեն 75,000 դանիական կրոն (մոտավորապես 10,000 եվրո): 1998 թվականի հոկտեմբերի 28-ին Գերագույն դատարանը առանց փոփոխման թողեց դատավճիռը և հատուցման չափը մեծացրեց մինչև 100,000 դանիական կրոնի (մոտավորապես 13,400 եվրո):

Կոնվենցիայի վարույթի շրջանակներում դիմումատուները Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով բողոքում են, իրենց դեմ իրականացված վարույթների տևողության առումով: Նրանք 10-րդ հոդվածի մասով պնդում են նաև, որ Գերագույն դատարանի կողմից իրենց մեղավորությունը վերահաստատելը անհամաչափ միջամտություն է ժողովրդավարական հասարակությունում իրենց հիմնարար պարտավորության կատարման՝ այն է «հանրային պաշտպանների» դերում հանդես գալու հանդեպ:

2003 թվականի հունիսի 19-ին իր պալատի վճռում Դատարանը, վեց ձայնով ընդդեմ մեկի որոշեց, որ 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել և չորս ձայնով ընդդեմ երեքի, որ 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

2003 թվականի դեկտեմբերի 3-ին Մեծ պալատի Հանձնախումբն ընդունեց դիմումատուների՝ գործը Մեծ պալատ ուղարկելու մասին դիմումը: Լուումները տեղի ունեցան 2004 թվականի սեպտեմբերի 8-ին:

2004 թվականի դեկտեմբերի 17-ի իր վճռում Մեծ պալատը միաձայն որոշեց, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել և ինը ձայնով ընդդեմ ութի, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում թույլ չի տրվել:

**(15) Makaratzis v. Greece (Մակարացիզն ընդդեմ հունաստանի), no. 50385/99**

1995 թվականի սեպտեմբերի 13-ին ոստիկանությունը փորձում է կանգնեցնել դիմումատուին՝ անգեն քաղաքացու, այն բանից հետո, ինչ վերջինս Աթենքի կենտրոնով մեքենան վարել է կարմիր լույսի տակ: Դիմումատուն չի կանգնում և մեծացնում է արագությունը: Նրան հետապնդում են մի քանի ոստիկաններ մեքենաներով և մոտոցիկլետներով և նրա մեքենան բախվում է մի քանի այլ

մեքենաների: Երկու այլ վարորդ վնասվածքներ են ստանում: Այն բանից հետո, ինչ դիմումատուն հաղթահարում է ոստիկանության հինգ ճանապարհարգելքները, ոստիկանները կրակ են բացում նրա մեքենայի վրա: Որոշ ժամանակ անց, Աթենքի գլխավոր փողոցներում ծավալված հետապնդումից հետո, նա կանգնեցնում է իր մեքենան բենզալցակայանի մոտ, սակայն կողպում է մեքենայի դռները և հրաժարվում է մեքենայից դուրս գալուց: Ոստիկանները շարունակում են կրակի տակ պահել մեքենան: Դիմումատուն պնդում է, որ ոստիկանները կրակ էին բացել իր մեքենայի վրա, մինչդեռ կառավարությունը պնդում է, որ ոստիկանները կրակել են օդ: Ոստիկաններից մեկն աման է նետում մեքենայի դիմացի ապակու վրա: Ի վերջո դիմումատուին ձերբակալում են ոստիկանները, որոնց հաջողվում է ներխուժել մեքենա: Դիմումատուին անմիջապես տեղափոխում են հիվանդանոց, որտեղ նա մնում է ինը օր: Նրա աջ թևի, աջ ոտնաթափի, ձախ նստատեղի և կրծքավանդակի աջ կողմի վնասվածքները դեռևս չեն անցել: Նա պնդում է, որ իրեն մեքենայից դուրս հանելիս կրակել են իր գարշապարին: Կառավարությունը վիճարկում է այս պնդումը: Դիմումատուի հոգեվիճակը զգալիորեն վատթարացել է պատահարից հետո:

Ոստիկանության ծառայողներից մի քանիսը լքում են դեպքի վայրն առանց բացահայտելու իրենց ինքնությունը և թաքցնելով օգտագործված զենքերի մասին եղած ողջ անհրաժեշտ տեղեկությունները: Հանրային դատախազը քրեական գործ է հարուցում ոստիկանության յոթ ծառայողների դեմ, որն ավարտվում է նրանց արդարացմամբ: Քանի որ պատահարին մասնակցած բոլոր ծառայողներին չէ, որ հնարավոր էր եղել բացահայտել, քերական դատարանին չի հաջողվում առանց որևէ կասկածի որոշել, որ մեղադրվող յոթ ծառայողները հենց այն ոստիկաններն էին, ովքեր կրակ էին բացել դիմումատուի վրա:

Կոնվենցիայի վարույթի շրջանակներում դիմումատուն բողոքում է Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ և 13-րդ հոդվածի հիմքերով, որ ոստիկանության ծառայողները գերազանցել են հրազենի օգտագործման իրենց իրավունքը՝ դրանով իսկ վտանգելով իր կյանքը: Նա նաև բողոքում է, որ պատահարի հարցում պատշաճ քննություն չի իրականացվել:

2004 թվականի փետրվարի 5-ին գործը քննող Դատարանը զիջեց ընդդատությունը հօգուտ Մեծ պալատի: Լսումներն անցկացվեցին 2004 թվականի հունիսի 30-ին:

2004 թվականի դեկտեմբերի 20-ին կայացրած իր վճռում Մեծ պալատը տասներկու ձայնով ընդդեմ հինգի որոշեց, որ տեղի է ունեցել 2-րդ հոդվածի խախտում պատասխանող պետության կողմից դիմումատուի կյանքի իրավունքը պաշտպանող օրենքի չընդունման կապակցությամբ և միաձայն, որ թույլ է տրվել 2-րդ հոդվածի խախտում, քանի որ իշխանությունները չեն կարողացել դիմումատուի վիրավորվելու հանգամանքների պատշաճ քննություն իրականացնել: Մեծ պալատն այնուհետև որոշեց, որ 3-րդ հոդվածի կամ 13-րդ հոդվածի մասով առանձին հարցեր չեն ծագում (տասնհինգ ձայնով ընդդեմ երկուսի և տասնվեց ձայնով ընդդեմ մեկի՝ համապատասխանաբար):

### VIII. Խորհրդատվական եզրակացություն

Անկախ պետությունների համագործակցությունը (ԱՊՅ) ստեղծվել է 1991 թվականի մի շարք նախկին խորհրդային հանրապետությունների կողմից: 1995 թվականի մայիսի 26-ին ստորագրության համար բացվեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների Անկախ պետությունների համագործակցության կոնվենցիան (ԱՊՅ-ի կոնվենցիան): Այն սահմանում է Անկախ պետությունների համագործակցության Մարդու իրավունքների հանձնաժողովի ստեղծումը (ԱՊՅ-ի հանձնաժողով), որը պետք է հետևեր անդամ պետությունների կողմից մարդու իրավունքների գծով ստանձնած պարտավորությունների կատարմանը: ԱՊՅ-ի կոնվենցիան ուժի մեջ մտավ 1998 թվականի ապրիլի 11-ին:

2001 թվականի մայիսին Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովն ընդունեց Հանձնարարական 1519 (2001)-ը, որտեղ հանձնարարեց Նախարարների խորհրդին խնդրել Դատարանին խորհրդատվական կարծիք տալ, թե արդյոք ԱՊՅ-ի հանձնաժողովը պետք է դիտվի որպես «միջազգային նախնական քննության կամ վեճերի լուծման մեկ այլ ընթացակարգ» Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 35-րդ հոդվածի 2-րդ (բ) կետի իմաստից ելնելով: Խորհրդարանական վեհաժողովը վկայակոչեց «ԱՊՅ-ի հանձնաժողովի անկատարությունը որպես մարդու իրավունքների պաշտպանության համար նախատեսված հաստատության» և կարծիք հայտնեց, որ այն չպետք է դիտվի որպես 35-րդ հոդվածի 2-րդ (բ) կետի դաշտում ընկած ընթացակարգ:

Նախարարների խորհուրդը որոշեց ընդունել Խորհրդարանական վեհաժողովի խորհուրդը և Դատարանին դիմում հղեց խնդրելով խորհրդատվական կարծիք «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Անկախ Պետությունների Համագործակցության կոնվենցիայի և Մարդու իրավունքների կոնվենցիայի համագոյակցության» հարցի վերաբերյալ:

2004 թվականի հունիսի 2-ին կայացրած իր որոշման մեջ Մեծ պալատը եզրակացրեց, որ խորհրդատվական եզրակացության մասին խնդրանքը չի մտնում իր խորհրդատվական իրավագործության մեջ:

## **IX. Երրորդ կողմի միջամտություններ**

Նախագահը, Դատարանի կանոնակարգի 61-րդ կանոնի 3-րդ կետի համաձայն, իրավունք ունի թույլ տալ ներկայացնել երրորդ կողմի դիտողությունները հետևյալ գործերում.

**(1) Մամատկուլովը և Ասկարովն ընդդեմ Թուրքիայի, թիվ 46827/99 և 46951/99**

(տես Գլուխ V-ը վերևում)

**(2) Բոսֆորուս ավիաուղիներն ընդդեմ Իռլանդիայի, թիվ 45036/98**

(տես Գլուխ V-ը վերևում)

**(3) Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի, թիվ 73797/01**

(տես Գլուխ IV-ը վերևում)

**(4) Նախովան և այլք .... թիվ 43577/98 և 43579/98**

(տես Գլուխ IV-ը վերևում)

**(5) Վոն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 53924/00**

(տես Գլուխ VII-ը վերևում)

**(6) Սենատոր Լայնս GmbH ընդդեմ 15 մասնակից պետությունների, թիվ 56672/00**

(տես Գլուխ VI-ը վերևում)

**X. 43-րդ հոդվածի համաձայն Մեծ պալատի հանձնախմբի կողմից քննության  
առնված գործերը**

**Տես հավելվածը**

**XI. 2004 թ. դեկտեմբերի 31-ին դրությամբ Մեծ պալատի կողմից քննության  
առնված գործերը**

- |      |          |  |
|------|----------|--|
| (1)  | 46827/99 | Մամատկուլովը և Ասկարովը ընդդեմ Թուրքիայի   |
| (2)  | 46221/99 | Օջալանն ընդդեմ Թուրքիայի                   |
| (3)  | 30324/96 | Սնոլոնուն ընդդեմ Ռումինիայի                |
|      | 35671/97 | Լենդները և Համերմեյերն ընդդեմ Ռումինիայի   |
|      | 31549/96 | Պոպովիչը և Դումիտրեսկուն ընդդեմ Ռումինիայի |
| (4)  | 54036/98 | Բոսֆորուսն ընդդեմ Իռլանդիայի               |
| (5)  | 71916/01 | Ֆոն Մալցանը և այլք ընդդեմ Գերմանիայի       |
|      | 71917/01 | Ֆոն Ջիցկիցը և այլք ընդդեմ Գերմանիայի       |
|      | 10260/02 | Ալֆրեդ Թոփֆեր Սթիֆունզն ընդդեմ Գերմանիայի  |
| (6)  | 32555/96 | Ռոշն ընդդեմ Սիացյալ Թագավորության          |
| (7)  | 46720/99 | Ժանը և այլք ընդդեմ Գերմանիայի              |
|      | 72203/01 |  |
|      | 72552/01 |  |
| (8)  | 73797/01 | Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի                  |
| (9)  | 43577/98 | Նախովան և այլք ընդդեմ Բուլղարիայի          |
|      | 43579/98 |  |
| (10) | 65731/01 | Հեփլը և այլք ընդդեմ Սիացյալ Թագավորության  |
|      | 65900/01 | Քինբերն ընդդեմ Սիացյալ Թագավորության       |
| (11) | 1513/03  | Դրաոնը և այլք ընդդեմ Ֆրանսիայի             |
|      | 11810/03 | Մորիսը և այլք ընդդեմ Ֆրանսիայի             |
| (12) | 74025/01 | Հըրոսն ընդդեմ Սիացյալ Թագավորության        |
| (13) | 58278/00 | Ժդանովան ընդդեմ Լատվիայի                   |
| (14) | 44774/98 | Լեյլա շահինն ընդդեմ Թուրքիայի              |
| (15) | 52620/99 | Ռասմուսենն ընդդեմ Դանիայի                  |
|      | 52562/99 | Սորենսենն ընդդեմ Դանիայի                   |
| (16) | 59532/00 | Բլեցիցն ընդդեմ Խորվաթիայի                  |

**Վերալսումների համար 2004 թ.-ին ներկայացված խնդրանքների ցանկ  
(կառավարությունների և դիմումատուների կողմից)**

Գանձատ թիվ	Դիմումատու	Պետություն	Բաժան- մունք	Վճիռ	Խնդրանք	Հանձնախու մբ/ամսաթի վ	Հանձնախմբի որոշումը
14949/02	Plaksin	Ռուսաստան	I	29.04.04	կառավարություն	10.11.04	մերժում
16412/02	Liadis	Հունաստան	I	27.05.04	դիմումատու	10.11.04	մերժում
1814/02	Stepinska	Ֆրանսիա	II	15.06.04	դիմումատու	10.11.04	մերժում
19449/02	Patrianakos	Հունաստան	I	15.07.04	դիմումատու	15.12.04	մերժում
21413/02	Kansal	ՄԹ	IV	27.04.04	դիմումատու	10.11.04	մերժում
21689/93	Ozkan and Others	Թուրքիա	II	6.04.04	կառավարություն	10.11.04	մերժում
23145/93 և 25091/94 26624/95	Elci and Others Worwa	Թուրքիա Լեհաստան	IV III	2.12.03 27.11.03	կառավարություն կառավարություն	24.03.04 14.6.04	մերժում մերժում
25754/94	Haran	Թուրքիա	IV	26.03.04	դիմումատու	15.12.04	մերժում
27699/95	Tekdag	Թուրքիա	I	4.12.03	դիմումատու	14.6.04	մերժում
26144/95	Ikincisoy	Թուրքիա	IV	27.07.04	կառավարություն	15.12.04	մերժում
26338/95	I.R.S. and others	Թուրքիա	II	20.07.04	կառավարություն	15.12.04	մերժում
28298/95	Buldan	Թուրքիա	II	20.04.04	դիմումատու	10.11.04	մերժում
30452/96	Takak	Թուրքիա	III	1.4.04	դիմումատու	7.7.04	մերժում
32984/96	Alfati and others	Թուրքիա	III	30.10.03	դիմումատու	24.03.04	մերժում
34220/96	A.W. (Andrzej Watral)	Լեհաստան	III	24.06.04	դիմումատու	10.11.04	մերժում
35071/97	Gunduz	Թուրքիա	I	4.12.03	դիմումատու + կառավարություն	14.6.04	մերժում
35577/97	Kaszubski	Լեհաստան	IV	24.2.04	դիմումատու	7.7.04	մերժում
36983/97	Haas	Նիդեռլանդներ	II	13.1.04	դիմումատու	14.6.04	մերժում
37761/97	Lislawska	Լեհաստան	IV	13.07.04	դիմումատու	15.12.04	մերժում
38267/97	H.A.L.	Ֆինլանդիա	IV	27.1.04	դիմումատու	7.7.04	մերժում
38410/97 և 40373/98 38746/97	Fontaine and Bertin Buffalo v. Srl	Ֆրանսիա Իտալիա	II I	08.07.03 22.07.04	դիմումատու դիմումատու	10.11.04 15.12.04	մերժում մերժում

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
 Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

38805/97	W.K.	Իտալիա	II	20.07.04	կառավարություն	15.12.04	մերժում
38811/97	Gora	Լեհաստան	IV	27.04.04	դիմումատու	10.11.04	մերժում
39359/98	Pavletic	Սլովակիա	IV	22.06.04	կառավարություն	10.11.04	մերժում
40261/98	Asuman Aydin	Թուրքիա	III	15.07.04	կառավարություն	10.11.04	մերժում
40290/98	Kacmar	Սլովակիա	IV	9.3.04	դիմումատու	7.7.04	մերժում
40528/98	Guven and others	Թուրքիա	III	22.1.04	կառավարություն դիմումատու	18.2.04 21.4.04	մերժում մերժում
40653/98	Iorgov	Բուլղարիա	I	11.3.04	դիմումատու	7.7.04	մերժում
40997/98	Duran	Թուրքիա	III	29.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
41578/98	Barancel and Others	Թուրքիա	III	27.05.04	կառավարություն	10.11.04	մերժում
41580/98							
42439/98	Cavus and Bulut	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
42023/98	Gennadiy Naumenko	Ուկրաինա	II	10.02.04	դիմումատու	15.12.04	մերժում
42042/98	Peryt	Լեհաստան	IV	2.12.03	դիմումատու	24.03.04	մերժում
42096/98	Skawinska	Լեհաստան	IV	16.09.03	դիմումատու	24.03.04	մերժում
42268/98	J.M.F. (Figuet)	Ֆրանսիա	II	01.06.04	դիմումատու	10.11.04	մերժում
42462/98	Kocak and others	Թուրքիա	III	19.05.04	դիմումատու	10.11.04	մերժում
42472/98	Tkacik	Սլովակիա	IV	14.10.03	դիմումատու	24.03.04	մերժում
42559/98	Oner and Cavusoglu	Թուրքիա	III	24.06.04	կառավարություն	10.11.04	մերժում
42738/98	Tuncel and others	Թուրքիա	III	27.11.03	դիմումատու	24.03.04	մերժում
42741/98	Cakar	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
42775/98	Ukunc and Gunes	Թուրքիա	III	18.12.03	կառավարություն	18.3.04	մերժում
43577/98							
43579/98	Nachova and others	Բուլղարիա	I	26.2.04	կառավարություն	7.7.04	<b>ԸՆԴՊԻՆՈՒՄ</b>
44054/98	Kaya	Թուրքիա	III	22.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
44181/98	Hajnrich	Լեհաստան	IV	25.05.04	դիմումատու	10.11.04	մերժում
44568/98	R.L. & M.-J.D.	Ֆրանսիա	III	19.05.04	կառավարություն	10.11.04	մերժում
44774/98	Sahin	Թուրքիա	IV	29.06.04	դիմումատու	10.11.04	<b>ԸՆԴՊԻՆՈՒՄ</b>
45107/98	Kokjtava	Չեխիա	II	2.12.03	դիմումատու	14.6.04	մերժում
45130/98	Slimane Kaid	Ֆրանսիա	II	06.04.04	դիմումատու	10.11.04	մերժում

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

46002/99	Wrobel	Լեհաստան	IV	20.07.04	դիմումատու	15.12.04	մերժում
46106/99	Eren	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
46272/99	Haydar Gunes	Թուրքիա	III	22.04.04	դիմումատու	10.11.04	մերժում
46355/99	Tsirikakis	Հունաստան	I	17.1.02	կառավարություն	10.7.02	մերժում
46388/99	Bozkurt and others	Թուրքիա	III	4.12.03	դիմումատու	24.03.04	մերժում
46720/99	Jahn and Others	Գերմանիա	III	22.1.04	կառավարություն	14.6.04	<b>ԸՆԴՈՒՆՈՒՄ</b>
72203/01	Hidir Ozdemir	Թուրքիա	III	15.01.04	դիմումատու	24.03.04	
72552/01					կառավարություն	15.1.04	
46952/99						մերժում	
47340/99	Jalaliaghdan	Թուրքիա	III	22.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
47355/99	Kerekyarto	Հունգարիա	II	16.12.04	դիմումատու	24.03.04	մերժում
48054/99	Sarioghlu	Թուրքիա	III	4.12.03	դիմումատու	24.03.04	մերժում
48062/99	Kircan	Թուրքիա	III	22.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
48065/99	Polat and others	Թուրքիա	III	15.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
48155/99	Cinar	Թուրքիա	III	15.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
48339/99	Kangasluoma	Ֆինլանդիա	IV	20.1.04	դիմումատու	14.6.04	մերժում
48438/99	Ozertikoglu	Թուրքիա	III	22.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
48553/99	Sovtransavto Holding	Ուկրաինա	Նախկին IV	2.10.03	դիմումատու	24.03.04	մերժում
48617/99	Ozyol	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
48865/99	Morsink	Նիդեռլանդներ	II	11.05.04	կառավարություն	10.11.04	մերժում
48995/99	Surugiu	Ռումինիա	II	20.04.04	դիմումատու	10.11.04	մերժում
49503/99	Dogan	Թուրքիա	III	29.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
49706/99	Rajak	Խորվաթիա	IV	28.6.01	դիմումատու	12.12.01	մերժում
49806/99	Prodan	Մոլդովիա	IV	18.05.04	կառավարություն	10.11.04	մերժում
49902/99	Brand	Նիդեռլանդներ	II	11.05.04	կառավարություն	10.11.04	մերժում
49975/99	Adamsy	Լեհաստան	IV	27.07.04	դիմումատու	10.11.04	մերժում
50118/99	Simsek	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
50119/99	Suvariogullari and others	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
50178/99	Nikitin	Ռուսաստան	II	20.07.04	դիմումատու	15.12.04	մերժում

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

50213/99	Tam	Սլովակիա	IV	22.06.04	կառավարություն	10.11.04	մերժում
50743/99	Hayrettin Barbaros Yilmaz	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
50903/99	Korkmaz	Թուրքիա	III	22.1.04	կառավարություն դիմումատու	18.2.04 21.4.04	մերժում
51053/99	Tutmaz and others	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն + դիմումատու	24.03.04	մերժում
51416/99	Dilek Dalgic	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
51442/99	Coudrier	Ֆրանսիա	II	10.2.04	դիմումատու	14.6.04	մերժում
51515/99	Krzak	Լեհաստան	IV	6.4.04	դիմումատու	7.7.04	մերժում
51559/99	Jamriska	Սլովակիա	IV	14.10.03	դիմումատու	24.03.04	մերժում
52478/99	Surman-Januszevska	Լեհաստան	IV	27.04.04	դիմումատու	10.11.04	մերժում
52665/99	Akkas	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
52744/99	Ergul and Engin	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
52859/99	Dostal	Չեխիա	II	25.05.04	դիմումատու	10.11.04	մերժում
53014/99	Peker	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
53084/99	Kormacheva	Ռուսաստան	I	29.1.04	դիմումատու	14.6.04	մերժում
53425/99	Dumas	Ֆրանսիա	II	23.09.03	դիմումատու	24.03.04	մերժում
53431/99	Gencel	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն + դիմումատու	24.03.04 24.03.04	մերժում մերժում
53544/99	Racinet	Ֆրանսիա	II	23.09.03	դիմումատու		
53760/00	B.B.	ՄԹ	IV	10.2.04	դիմումատու	7.7.04	մերժում
53895/00	Ergogan	Թուրքիա	III	23.10.03	կառավարություն	24.03.04	մերժում
53988/00	Moufflet	Ֆրանսիա	II	3.2.04	կառավարություն	26.4.04	մերժում
54457/00	Kovacs	Հունգարիա	II	16.12.03	դիմումատու	7.7.04	մերժում
54949/00	Icoz	Թուրքիա	III	15.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
55084/00	Dagot	Ֆրանսիա	II	27.04.04	դիմումատու	10.11.04	մերժում
55634/00	Cianetti	Իտալիա	I	22.04.04	կառավարություն	10.11.04	մերժում
56021/00	Erolan and others	Թուրքիա	III	15.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
56193/00							
57581/00	E.O. and V.P	Սլովակիա	IV	27.04.04	երրորդ կողմ	10.11.04	մերժում

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

57562/00	Becerikli and Altekin	Թուրքիա	III	8.1.04	դիմումատու	11.3.04	մերժում
57939/00	Kalyoncugil and others	Թուրքիա	III	29.1.04	կառավարություն	18.2.04	մերժում
57944/00	Cetinkaya and others	Թուրքիա	III	18.12.03	կառավարություն դիմումատու	8.3.04 11.3.04	մերժում
57966/00	Vass	Հունգարիա	II	25.11.03	դիմումատու	24.03.04	մերժում
58116/00	Pfleger	Չեխիա	II	27.07.04	դիմումատու	15.12.04	մերժում
58177/00							
58178/00	Houfova (No 1 and 2)	Չեխիա	II	15.06.04	դիմումատու	10.11.04	մերժում
58278/00	Zdanova	Լատվիա	I	17.06.04	կառավարություն	10.11.04	<b>ԸՆԴՊԻՆՈՄ</b>
58749/00	Matencio	Ֆրանսիա	I	15.1.04	դիմումատու	31.3.04	մերժում
58749/00	Matencio	Ֆրանսիա	I	15.1.04	դիմումատու	31.3.04	մերժում
58887/00	Karoly	Հունգարիա	II	2.12.03	դիմումատու	24.03.04	մերժում
58973/00	Rakevich	Լուսատան	II	28.10.03	դիմումատու	24.03.04	մերժում
59234/00	Al and others	Թուրքիա	III	13.11.03	դիմումատու	24.03.04	մերժում
59532/00	Krstina Blecic	Խորվաթիա	I	29.07.04	դիմումատու	15.12.04	<b>ԸՆԴՊԻՆՈՄ</b>
60297/00	Toth	Հունգարիա	II	30.3.04	դիմումատու	7.7.04	մերժում
60958/00	S.C. (Scott Cody)	ՄԹ	IV	15.06.04	կառավարություն	10.11.04	մերժում
62503/00	Karahalios (no 2)	Հունաստան	I	6.3.04	դիմումատու	14.6.04	մերժում
62543/00	Gorraiz Lizarraga and Others	Իսպանիա	IV	27.04.04	դիմումատու	10.11.04	մերժում
63627/00	Volesky	Չեխիա	II	29.06.04	դիմումատու	10.11.04	մերժում
64796/01	Couillard Maugery	Ֆրանսիա	I	01.07.04	դիմումատու	10.11.04	մերժում
66096/01	Zynger	Լեհաստան	IV	13.07.04	կառավարություն	15.12.04	մերժում
66296/01	Belaousov and Others	Հունաստան	I	27.05.04	դիմումատու	10.11.04	մերժում
6711/02	Nastos	Հունաստան	I	15.07.04	դիմումատու	10.11.04	մերժում
67534/01	Romashov	Ուկրաինա	II	27.07.04	կառավարություն	15.12.04	մերժում
67972/01	Somogyi	Իտալիա	II	18.05.04	կառավարություն	10.11.04	մերժում
68255/01-61	Crochard and 6 others	Ֆրանսիա	II	3.2.04	դիմումատու	8.4.04	մերժում
69498/01	Pla et Puncernau	Անդորրա	IV	13.07.04	կառավարություն	15.12.04	մերժում
70276/01	Gusinskiy	Ռուսաստան	I	19.05.04	կառավարություն	10.11.04	մերժում
73562/01							

Մեծ պալատ. 2004 թ.-ի տարեկան զեկույց  
Ոչ պաշտոնական թարգանություն. կատարվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության կողմից

73565/01 73712/01 73744/01 73792/01 73793/01	Sirbu and Others	Մոլդավիա	IV	15.06.04	կառավարություն	10.11.04	մերժում
73577/01	Vodarenska Akciova Spolecnost A.S.	Չեխիա	II	24.2.04	դիմումատու	7.7.04	մերժում
73797/01	Kyprianou	Կիպրոս	II	27.1.04	կառավարություն	19.4.04	<b>ԸՆԴՈՒՆՈՒՄ</b>
73936/01	De Jorio	Իտալիա	I	03.06.04	կառավարություն	10.11.04	մերժում
74025/01	Hirst (N 2)	ՄԹ	IV	30.03.04	կառավարություն	10.11.04	<b>ԸՆԴՈՒՆՈՒՄ</b>
7503/02	Neroni	Իտալիա	I	22.04.04	դիմումատու	10.11.04	մերժում
75872/01	Gidel	Լեհաստան	IV	14.10.03	դիմումատու	24.03.04	մերժում
8694/02	Palaska	Յունաստան	I	19.05.04	դիմումատու	10.11.04	մերժում
8803/02	Dogan	Թուրքիա	III	29.06.04	կառավարություն	10.11.04	մերժում
9446/02	Gesiarz	Լեհաստան	IV	18.05.04	դիմումատու	10.11.04	մերժում